# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Լ. ՏԱՐԻ ԹԻՒ 13 (1463) ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 17, 2010
VOLUME 30, NO. 13 (1463) SATURDAY, APRIL 17, 2010

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ԷԴՈՒԱՐԴ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ ԿԱՍԿԱԾԻ ՏԱԿ Կ՛ԱՌՆԷ ԹՈՒՐՔԻՈՅ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի Արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան Ուաշինկթընի մէջ հայաստանցի լրագրողներու հետ հանդիպման ամփոփելով Սերժ Սարգսեանի Միացեալ Նահանգներու մայրաքաղաքին մէջ ունեցած հանդիպումները, կասկածի տակ դրած է հայ-թրքական յարաբերութիւնները կարգաւորելու գծով Թուրքիոյ պատրաստակամութիւնը:

Նալբանդեան ըսած է, թէ կայացած հանդիպումները անգամ մը եւս հնարաւորութիւն տուած են համոզուելու, որ հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման վերջին զարգացումներու վերաբերեալ Հայաստանի իշխանութիւններու գնահատականները ճիշդ են:

Խօսելով հայ-թրքական յարաբերութիւններու հեռանկարներու մասին՝ Հայաստանի արտաքին գործոց նախարարը ըսած է. - «Եթէ Թուրքիան իրականում ցանկանում է այս գործընթացը չձախողել, պետք է շատ արագ գործնականում ցոյց տայ, որ պատրաստ է վաւերացնել եւ իրականացնել Արձանագրութիւնները եւ գնալ յարաբերութիւնների կարգաւորման առանց նախապայմանների, ինչին սպասում է միջազգային հանրութիւնը»:

## ՕՊԱՄԱ-ՍԱՐԳՍԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԷՆ ԵՏՔ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԿՈՉ Կ՛ԸՆԷ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԵՒ ԹՈՒՐՔԻՈՅ՝ ԿԱՐԳԱՒՈՐԵԼՈՒ ԻՐԵՆՑ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Օպամա-Սարգսեան հանդիպումը Ուաշինկթընի Համաժողովներու Կեդրոնէն ներս

Երկուշաբթի, Ապրիլ 12-ին Սերժ Սարգսեանի եւ Պարաք Օպամայի միջեւ Ուաշինկթընի մէջ տեղի ունեցած հանդիպումէն ետք Սպիտակ Տունը տարածեց յայտարարութիւն մը, ուր Միացեալ Նահանգներու նախագահը կոչ կ'ընէր Հայաստանին եւ Թուրքիոյ՝ կարգաւորելու իրենց յարաբերութիւնները:

«Նախագահ Օպաման բարձր կը գնահատէ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի՝ Երեւանի եւ Անգարայի միջեւ յարաբերութիւններու կարգաւորմանն ուղղուած ջանքերը: Պարաք Օպաման նաեւ կոչ կ'ընէ երկու կողմերուն՝ վաւերացնել Արձանագրութիւնները եւ հաստատել դիւանագիտական փոխյարաբերութիւններ»,- ըսուած է յայտարարութեան մէջ:

Երկուշաբթի երեկոյեան կայացած Օպամա-Սարգսեան հանդիպումը տեւած է մօտ 45 վայրկեան: Ուաշինկթընի Համաժողովներու Կեդրոնէն ներս տեղի ունեցած բանակցութիւններու աւարտին երկու նախագահները որեւէ յայտարարութիւն չեն կատարած լրագրողներուն:

Նախագահ Օպամայի հրաւիրած Միջուկային Ապահովութեան գագաթժողովին մասնակցելու նպատակով Ուաշինկթըն ժամանած Սերժ Սարգսեան հանդիպում ունեցաւ նաեւ Թուրքիոյ վարչապետ Ռեջէփ Թայիփ Էրտողանի հետ: Թուրքիոյ կառավարութեան ղեկավարի հետ հանդիպումը շարունակուեցաւ մօտ մէկուկէս ժամ: Այս հանդիպումի աւարտին եւս, երկու երկիրներու ղեկավարները չպատասխանեցին լրագրողներու հարցերուն:

Թրքական որոշ աղբիւրներու

Շար.ը էջ 5

## ՀԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱՄԱԿԸ՝ ՈՒՂՂՈՒԱԾ ՆԱԽԱԳԱՀ ՕՊԱՄԱՅԻՆ

Ապրիլ 12-ին ՍԴՀԿ Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱԽ) նամակ մը յղած է Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամային, ուր անդրադարձած է Հայաստանի իր պաշտօնակից Սերժ Սարգսեանի եւ Թուրքիոյ վարչապետ Ռեճէփ Թայիփ Էրտողանի հետ իր ունենալիք հանդիպումներուն, ինչպէս նաեւ Ապրիլ 24-ի առթիւ իր տարեկան յայտարարութեան:

Նամակին մէջ ՀԱԽ կոչ կ'ընէ Նախագահ Օպամային՝ սատար կանգնելու տարածաշրջանէն ներս աւելի լայն ժողովրդավարութեան եւ յարգելու իր խոստումը՝ Հայկական Ցեղասպանութեան ճանաչման գծով, փոխանակ պաշտպանելու Հայ-Թրքական Արձանագրութիւններու վաւերացումը:

«Հայ Ամերիկեան Խորհուրդի եւ ամերիկահայութեան անունով կոչ կ'ընենք Ձեզի, յարգելու Ձեր համայնքին տուած խոստումը՝ 95 տարիներ առաջ պատահած ողբերգութիւնը ճանչնալու որպէս պատմական իրողութիւն եւ զանոնք կոչելու իրենց իսկական անունով՝ որպէս Հայկական Ցեղասպանութիւն»,- ըսուած է Ամերիկայի նախագահին ուղղուած նամակին մէջ:

«Աղաւաղելով Հայկական Ցեղասպանութեան առանձնայատկութիւնը, յօգուտ միջազգային կամ ներքին քաղաքական եւ տնտեսական շահերու, յառաջդիմութեան գծով կուտայ հակառակ արդիւնքը եւ նախընթաց կը դառնայ ապագայ ցեղասպանութիւններուն եւ մարդկային իրաւունքներու խախտումներուն, ինչպէս փաստուեցաւ Տարֆուրի մէջ պատահած ցեղասպանութեան պարագային»:

«Թէեւ Ձեր վարչամեքենայէն ներս կրնան գտնուիլ ոմանք, որ խորհուրդ տան Ձեզի քաջալերելու Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսեանին եւ Թուրքիոյ վարչապետ Ռեճէփ Թայիփ Էրտողանին, որպէսզի իրենց երկիրներուն կողմէ վաւերացնեն Հայ-Թրքական Արձանագրութիւնները, մենք, ընդհակառակը, կը դիմենք Ձեզի, որ քաջալերէք երկու երկիրներու ղեկավարները, իրենց երկիրներէն ներս ժողովրդավարական սկզբունքները զարգացնելու, որպէսզի կարելի ըլլայ տարածաշրջանէն ներս բարեկամութիւն հաստատել»,- ըսուած է ՍԴՀԿ հովանաւորութեան տակ գործող կազմակերպութեան նամակին մէջ:

Նամակը, ներկայացնելէ ետք Հայաստանի մէջ տիրող ներկայ կացութիւնը, կու գայ յայտնելու որ Ամերիկահայութիւնը կ'ուզէ տեսնել Հայաստանի մէջ իսկական ժողովրդավարութիւն, ուր կը յարգուին քաղաքացիներու իրաւունքները եւ պաշտպանուած են մարդու

Շար.ը էջ 4

## Հ.Բ.Ը.Մ. ՎԱՉԷ ԵՒ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԵՐԿ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ՍԱՆԵՐԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐԻ ԱՌՋԵՒ



Տիկ Թամար Մանուկեան Ելոյթի պահուն

ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Արդար հպարտութեամբ ներկայ գտնուեցանք իր կազմակերպչական երեւոյթով՝ համեստ, բայց իր բովանդակութեամբ՝ մարտահրաւէրային տպաւորիչ կրթական ձեռնարկի մը, որ տեղի ունեցաւ 30 Մարտ 2010-ին, կ. ա. ժամը 10-էն սկսեալ, Հ.Բ.Ը.Մ.-ի համալիրէն ներս, Փասատինա:

Ինչպէս ցոյց կու տայ անոր կրթական բնոյթը, ձեռնարկը նախաձեռնուած էր ՀԲԸՄ-ի Վաչէ եւ Թամար Մանուկեան երկրորդական վարժարանի տեսչութեան կողմէ, առ ի մեծարանք, համանուն վարժարանի բարերարներ՝ Լոնտոնաբնակ Տէր եւ Տիկ Վաչէ եւ Թամար Մանուկեաններուն, որոնց ազգային, կրթական եւ հայրենասիրական կոթողային բարեգործութիւն-

Շար.ը էջ 16

### ՕՐՈՒԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՆ ՀԵՏ

# ՈՒԱՇԻՆԿԹԸՆԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԷՆ ՕԳՏՈՒՈՂՆԵՐԸ

**Գ. ԽՈՏԱՆԵԱՆ**

Ուաշինկթընի մէջ տեղի ունեցաւ Միջուկային Ապահովութեան Գագաթի ժողովը, որ նախաձեռնած էր Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամա: Հրաւիրուած էին 47 երկիրներ, քննարկելու համար միջուկային նիւթերը ապահով վայրեր տեղափոխելու հարցը, որպէսզի անոնք, օրին մէկը չյայտնուին ահաբեկչական կազկազմակերպութիւններու եւ յատկապէս «Ալ Ղաիտայի» կառոյցներուն մօտ:

Ուշագրաւ էր, որ սոյն ժողովին չէր հրաւիրուած Ատրպէյճանի նախագահ Հէյտար Ալիեւ, հակառակ որ ան փորձ կատարած էր իրեն համար տեղ ապահովելու՝ գագաթաժողովի սեղանին շուրջ: Իսկ Հայաստանի գործող նախագահահ Սերժ Սարգսեան ոչ միայն հրաւիրեալներու շարքին էր, այլ նաեւ արժանացաւ Օպամայի հետ առանձին հանդիպումի:

Օպամա-Սարգսեան խօսակցութիւններու աւարտին երկու ղեկավարները յայտարարութիւններով հանդէս չեկան լրագրողներու առջեւ, սակայն Սպիտակ Տունը հաղորդագրութիւն մը հրապարակելով եկաւ յայտնելու թէ, նախագահ Օպամա կոչ ըրած է Հայաստանին եւ Թուրքիոյ՝ կարգաւորելու իրենց յարաբերութիւնները: Հաղորդագրութիւնը կը յայտնէր նաեւ, որ խօսուած է Հայաստանի մէջ ժողովրդավարութեան զարգացման հարցի շուրջ: Գնահատելի է որ, Միացեալ Նահանգներու ղեկավարը օգտագործած է այս առիթը, յիշեցնելու Հայաստանի նախագահին՝ այս կարեւոր հարցի մասին: Դժբախտաբար, Ամերիկահայ կազմակերպութիւնները ընդհանրապէս, Միացեալ Նահանգներ-Հայաստան յարաբերութիւններուն մէջ կ'անտեսեն Հայաստանի մէջ ժողովրդավարութեան դիմագրաւած դժուարութիւնները: Միակ կազմակերութիւնը, որ հետեւողականօրէն կը յիշեցնէ ամերիկեան կառավարութեան՝ նկատի առնելու այս պարագան, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան հովանաւորութեան տակ գործող Հայ Ամերիկեան Խորհուրդն է, որ Սերժ Սարգսեանի Ուաշինկթըն այցելութեան առթիւ Պարաք Օպամային յղած իր նամակին մէջ կը բարձրացնէր միաժամանակ երեք հարցեր՝ Հայկական Ցեղասպանութեան ճանաչում, հայ-թրքական յարաբերութիւններ եւ Հայաստանի մէջ ժողովրդավարական սկզբունքներու կիրառում:

Վերադառնալով Սերժ Սարգսեանի այցելութեան, կասկած չկայ, որ ան գագաթի ժողովին մասնակցելու հրաւէրին արժանացած էր հայ-թրքական Արձանագրութիւններուն նոր թափ տալու եւ Պարաք Օպամային ալ, «ցեղասպանութիւն» բառի օգտագործումէն խուսափելու նպատակներով:

Միացեալ Նահանգները առաջին օրէն մղիչ գլխաւոր ուժն եղաւ երկու երկիրներուն միջեւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու եւ սահմանը բանալու ձգտող արձանագրութիւններու վաւերացման գծով: Այս նպատակով Սերժ Սարգսեանի եւ Թուրքիոյ վարչապետ Ռեճէփ Էրտողանի միջեւ Ուաշինկթընի մէջ կայացած հանդիպումը եւս, չկրցաւ բեկում յառաջացնել թրքական կեցուածքին մէջ: Այլապէս, անհաւանական չէր նաեւ Օպամա-Սարգսեան-Էրտողան եռակողմ հանդիպումի մը կայացումը, եթէ կարելի դառնար նշանակալից յառաջընթաց արձանագրել:

Ուաշինկթընեան հանդիպումներէն ետք ի յայտ եկաւ որ, թրքական կողմը ղարաբաղեան հարցը լուծուած տեսնելու իր նախապայման վրայ աւելցուցած է երկրորդ մը՝ Հայկական Ցեղասպանութեան մասին չխօսելու պայմանը: Թուրքիոյ վարչապետը Սարգսեանի յայտնած է, որ այս պահուն երբ Միացեալ Նահանգներու Գոնկրէսը եւ Շուէտի խորհրդարանը կը քննարկեն Ցեղասպանութեան հարցը, եթէ Արձանագրութիւնները ներկայացուին թրքական խորհրդարան՝ կրնան մերժուիլ:

Հայաստանի իշխանութիւնները վերջապէս անդրադառնալով, որ Թուրքիոյ հետ յարաբերութիւններու բարելաւումը ներկայ հանգրուանին հեռանկար չունի, սկսած են աւելի վճռական յայտարարութիւններով հանդէս գալ: Էրտողանի հետ հանդիպումէն անմիջապէս ետք, Սերժ Սարգսեան այցելած է Ամերիկայի նախկին նախագահ եւ հայութեան իրաւունքներու պաշտպան Վուտրօ Ուիլսընի շիրիմին եւ հոն յայտարարած է.- «Մենք չենք պատրաստւում որեւէ ձեւաչափում քննութեան առարկայ դարձնել Ցեղասպանութեան եղելութեան փաստը կամ ձեւացնել, թէ հաւատում ենք, որ Թուրքիան կարող է որեւէ դրական դերակատարութիւն ունենալ Ղարաբաղի հիմնախնդրի կարգաւորման բանակցային գործընթացում»: Նման ելոյթներ ան ունեցած էր նաեւ վերջերս Տէր Զոր կատարած իր այցելութեան եւ գերմանական «Տէր Շպիկըլ» թերթին տրուած հարցազրոյցի ընթացքին:

Ամփոփելով այս բոլորը կրնանք ըսել որ, Միացեալ Նահանգներու, Հայաստանի ե՛ւ Թուրքիոյ նախագահները՝ երեքն ալ օգտուեցան Միջուկային Ապահովութեան Գագաթաժողովին առընթեր իրենց միջեւ կայացծ հանդիպումներէն: Ըստ երեւոյթին, Թուրքիոյ վարչապետը խոստում ձեռք ձգած է, որ նախագահ Օպամա այս տարի եւս պիտի չարտասանէ «ցեղասպանութիւն» բառը՝ Ապրիլ 24-ի իր յայտարարութեան մէջ: Օպամա պիտի կարողանայ խուսափիլ այդ բառի օգտագործումէն, փոխարէնը հայութեան ցոյց տալով որ մօտէն կը հետաքրքրուի Հայաստանով եւ որուն համար ալ իր սուղ ժամանակէն 45 վայրկեան յատկացուց Սերժ Սարգսեանի հետ հանդիպելու համար:

Մեծագոյն օգտուողը եղաւ անշուշտ, Սերժ Սարգսեանը, որ ապահովեց միջազգային վարկ, որու շնորհիւ ան պիտի կարողանայ ամրապնդել իր իշխանութիւնը, այն պահուն երբ իր դէմ կը գտնուի ոչ միայն Հայաստանի առաջին նախագահը, այլ սկսած է իրեն հակադրուիլ նաեւ՝ երկրորդը:

# ԱՅԴ Ո՞Վ Է, ՈՐ ԵՐԿՈՒ ԳԻՐՔ ՉԻ ԿԱՐԴԱՑԵԼ. ԿԱՄ ՈՎՔԵՐ ԵՆ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՆԵՐԿԱՅ ԱԽՈՅԵԱՆՆԵՐԸ...

**ՆԱՐԻՆԷ ԴԻԼԲԱՐԵԱՆ**

Քաղաքամայր Երեւանից հեռու՝ անդորրաբեր Տաւուշում, Սերժ Սարգսեանը վերջապէս պատասխանեց այն հիմնական հարցադրմանը, որն իր առջեւ դրել էր իր յենարանը համարուող քաղաքական եւ ֆինանսական վերնախաւը՝ փոխել վարչապետին: Նախագահի պատասխանը միանշանակ էր եւ կանխատեսելի՝ ոչ: Ոչ-ը մեղմելու համար ասպարէզ նետուեց կառավարութեան կազմում հնարաւոր փոփոխութիւնների տարբերակը՝ երկու-երեք նախարարի ձեւաչափով:

Ակնյայտ է, որ կառավարութեան քաղաքականութիւնից դժգոհ են ոչ միայն Ռ. Քոչարեանը եւ օլիգարխները, այլեւ հայ հասարակութեան ստուար հատուածը, յատկապէս մանր եւ միջին ձեռներէցները: Նրանք օր-օրի դուրս են մղւում տնտեսական գործունէութեան դաշտից, քանզի չկարողանալով օլիգարխներից, իմա՝ հայաստանեան խոշոր բիզնեսի ներկայացուցիչներից, հաւաքել օրինական հարկերի անգամ չնչին մասը, Տիգրա-ն Սարգսեանի կառավարութիւնն իր հարկային եւ տնտեսական վարչարարութեան հնարաւորութիւնները կիրառում էր միայն տօնավաճառների, կրպակավաճառների, խանութպանների, տաքսու վարորդների եւ նրանց բախտակիցների նկատմամբ, որոնք զրկւում են հանապազօրեայ հացից, բայց պետական բիւջէն, միեւնոյնն է, մնում է թերակատարուած: Սոցիալական ընդվզման հեռանկարը սկսել է վախեցնել թուլացած դիրքերով գործող իշխանութիւնը: Առանց կրակի ծուխ չի լինում:

Ներկայ պահին Սերժ Սարգսեանի համար առաւել լուրջ եւ անմիջական վտանգ են ներկայացնում, ոչ թէ աւանդական ընդդիմադիր ուժերը ՀԱԿ-ը, կամ այլք, այլ խոշոր բիզնեսը եւ նրանց ստուերում մշտապէս գտնուող Քոչարեանի ուրուականը: Ներմուծողները պատեհ-անպատեհ բարձրացնում են գները, բարձրաձայն քննադատում կառավարութեանը, որ երկչոտ փորձեր է կատարում է ընդամէնը վերլուծելու նրանց շրջնառութեան իրական ծաւալները: Մարդկանց մեծ մասն արդէն զայրացած է ու անպաշտպան, հեռուստացոյցով կիրգիզական հերթական յեղափոխութեան պատկերներն են:

Ինքնապաշտպանութեան բնազդը ենթադրում է, որ Սերժ Սարգսեանը պէտք է փորձի կանխարգելիչ հարուած հասցնել խոշոր օլիգարխներին: Նոր դէմքեր են պէտք, նոր անուններ՝ չվարկաբեկուած եւ հանրային վստահութեան որոշ չափաբաժնով: Շեշտենք մի հանգամանք, որ յայտնի ուղեւորութեան ընթացքում ռուսաստանեան յայտնի գործարար Ռուբէն Վարդանեանը հանդիսաւորապէս ներկայացրեց իր բացուելիք դպրոցը Դիլիջանում, եւ Սերժ Սարգսեանն իր ներկայութեամբ պատուեց ու կարեւորեց այդ նախաձեռնութիւնը՝ որպէս բիզնես-կրթութեան՝ Հայաստանի համար նոր եւ պահանջարկուած ուղղութիւն: Ասել է թէ՝ Հայաստանին արդէն պէտք են բազմաթիւ գրքեր կարդացած, կրթուած բիզնեսմէններ....Գուցէ Ռուբէն Վարդանեանի օրինակը ոգեւորել է գործող նախագահին:

Տիգրան Սարգսեանը կառավարութեան նիստում խիստ քննադատօրէն անդրադարձաւ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարութիւնների այն ստորաբաժանումների գործունէութեանը, որոնք չեն կարողանում վերլուծել եւ հաշուարկել խոշոր բիզնեսի շրջանառութիւնը: Վարչապետն արդէն ստացել է նախագահի համաձայնութիւնը՝ պատասխան հարուածը հասցնելու իր նախընտրած ձեւակերպմամբ՝ օլիգոպոլիայի կոնկրետ ներկայացուցիչներին:

Այս տեսանկիւնից բաւական ուշագրաւ է Սերժ Սարգսեանի քաղաքական բառապաշարում յայտնուած ձեւակերպումը, գիտելիքահեն վարչապետից յետոյ՝ նախագահն էլ է սկսում խօսել այն մասին, որ իրենց կեանքում երկու գիրք չկարդացած, երկու մարդ չղեկավարած մարդիկ իրաւունք չունեն քննադատել իր կառավարութեան գործունէութիւնը: Կարող ենք կանխատեսել, որ յատկապէս «Բարգաւաճ Հայաստանի» համար դժուար ժամանակներ են գալիս, փոփոխման ենթական նախարարներն էլ միայն նորընծայ հանրապետականներից չեն լինի:

Հայաստանի տնտեսաքաղաքական իրավիճակում որոշ օլիգարխներին զսպելու գործողութիւնը գրեթէ տիտանների մենամարտ կարող է յիշեցնել, եւ դժուար է միանշանակ պնդել, թէ յաղթանակն ում կողմում կարող է լինել, կամ ում կշեռքի նժարն աւելի ծանր կը լինի: Բայց այդ պայքարն այլեւս օրուայ հրամայականն է՝ պայքար մինչեւ վերջ, այսինքն՝ մինչեւ ախոյեանի կապիտուլյացիա:

«7 ՕՐ»

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

# ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ՎԱՐԺԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Սերժ Սարգսեանը իր աջակցութիւնն է յայտնել վարչապետ Տիգրան Սարգսեանի գլխաւորած կառավարութեան վարած տնտեսական քաղաքականութեանը, հերքելով վարչապետի եւ նրա տնտեսական թիմի հնարաւոր փոփոխման մասին լուրերը:

«Ես կարծում եմ, որ այսօր մենք գտնւում ենք վերականգնման փուլում, որովհետեւ արդէն 3-րդ ամիսն է՝ նկատւում է տնտեսական աճ: Տարուայ առաջին 2 ամիսներին մեր տնտեսութիւնն ունեցել է 3.1 տոկոս աճ: Սա համարեա այնքան է, ինչքան 2008թ. առաջին 2 ամիսներին»,- ասել Սերժ Սարգսեանը ու ընդգծել, որ չնայած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը ծանր վնաս է հասցրել Հայաստանի տնտեսութեանը, այդուհանդերձ, կառավարութեանը յաջողուեց չկրճատել սոցիալական որեւէ ծրագիր, չուշացան աշխատավարձերը, թոշակներն ու նպաստները:

Նախագահը շեշտել է, որ միջազգային կազմակերպութիւնները «լաւ գնահատականի» են արժանացրել տնտեսութեան վերականգնման ուղղութեամբ կառավարութեան ձեռնարկած քայլերը:

«Իհարկէ, սա բաւարար չէ: Որովհետեւ մենք գտնւում ենք դեռեւս վերականգնման փուլում եւ պարտաւոր ենք իրականացնել նոր ծրագրեր, պարտաւոր ենք անպայման հաշուետու լինել նախկինում արուած ծրագրերի մասով: Մենք մօտակայ տեսանելի ապագայում կը խօսենք այն մեծ ծրագրերի ընթացքի մասին, որոնց մասին մենք խօսել էինք դեռ մէկուկէս տարի առաջ», - նշել է Սերժ Սարգսեանը:

Անդրադառնալով վարչապետի փոփոխութեան մասին պարբերաբար շրջանառուող լուրերին՝ Սարգսեանը դրանք «անհիմն» է որակել:

Հանրապետութեան նախագահը նաեւ արձագանքել է կառավարութեան հասցէին վերջին շրջանում հնչեցուած քննադատութեանը ինչպէս ընդդիմադիր ուժերի, այնպէս էլ Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերդ Քոչարեանի եւ իշխող կոալիցիայի մաս կազմող «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան կողմից:

«Բոլոր նրանք, ովքեր ասում են, որ Հայաստանը խոր ճգնաժամի մէջ է, նրանք էլ երեւի իրաւունք ունեն նման կարծիք յայտնելու, բայց եթէ նրանք կարծիք են յայտնում, որպէսզի կառավարութեանը շահագրգռեն աւելի ինտենսիվ աշխատել, սա մի տարբերակ է, իսկ եթէ ասում են այն բանի համար, որպէսզի վիճակն էլ աւելի վատանայ, աւելի վատ սպասումներ ձեւաւորուեն, իհարկէ, այդպիսի մօտեցումն ինձ համար ընդունելի չէ եւ ընկալելի չէ»,- յայտարարել է Սերժ Սարգսեանը:

# ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՊԱՇՏՕՆԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ «ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ» ՈՉ ՄԻ ԴՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ ՏԱԼ ՉԻ ԿԱՐՈՂ

«ԹԵՐԹ»: «Կը ցանկանայի որեւէ դրական գնահատական տալ, բայց, ցաւօք, չեմ կարող»,- անդրադառնալով Սերժ Սարգսեանի նախագահութեան երկու տարիներին՝ այսօր ասաց «Ժառանգութեան» վարչութեան նախագահ Արմէն Մարտիրոսեանը:



«Ժառանգութեան» վարչութեան նախագահ Արմէն Մարտիրոսեան

Ըստ նրա՝ վերջին երկու տարիներին որեւէ առաջխաղացում չի նկատուել. «Մարտի 1-ի հանգուցալուծում չի եղել, չեն բացայայտուել հրաման տուողներն ու կատարողները, քաղբանտարկեալներ կան երկրում, դատական համակարգը մնացել է նոյնը, ընտրական գործընթացները չեն աշխատում, տնտեսական բարեփոխումներ չեն կատարւում, արտաքին մարտահրաւէրներին համարժէք պատասխան չի տրւում»:

Արմէն Մարտիրոսեանը բացասական գնահատեց նաեւ Սերժ Սարգսեանի արտաքին նախաձեռնողական քաղաքականութիւնը: Նա ասաց, որ «որեւէ մէկը Հայաստանում չունի մանդատ, որ ստորագրէր հայ-թուրքական Արձանագրութիւններ եւ փորձեր վաւերացնել դրանք»:

# «Ա1+»-Ի ՂԵԿԱՎԱՐԸ ԱԿՆԿԱԼԻՔ ՉՈՒՆԻ ՅՈՒԼԻՍԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԵԼԻՔ ՄՐՑՈՅԹԻՑ

«Ա1+» հեռուստաընկերութեան հիմնադիր «Մելտեքս» ընկերութեան տնօրէն Մեսրոպ Մովսիսեանը ակնկալիք չունի Յուլիսի 20-ին յայտարարուելիք հեռուստայաճախականութեան մրցոյթից: «Ես կարծում եմ, որ սա հերթական ավանտուրան է Ամալեանի, համոզուած եմ դրանում», - յայտարարեց նա «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում:

Յուլիսի 20-ին Հեռուստատեսութեան եւ ռադիոյի ազգային յանձնաժողովին կը յայտարարի, թէ երբ եւ ինչ պայմաններով է անցկացուելու մրցոյթը: Ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանին յայտնեց յանձնաժողովի նախագահ Գրիգոր Ամալեանը, յաջորդ տարուայ Յունուարին աւարտւում է վերջին լիցենզիայի ժամկէտը, ուստի Յուլիսի 20-ից սկսած 6-ամսեայ ժամկէտում պէտք է մրցոյթներ անցկացուեն:

Հեռարձակման լիցենզաւորման մրցոյթները սառեցուել էին երկու տարի առաջ՝ երկրում հեռուստատեսութեան թուայնացման գործընթաց սկսելու պատճառաբանութեամբ: Սակայն լրագրողական շատ կազմակերպութիւններ կասկած են յայտնում, որ թուայնացման գործընթացը միայն պատրուակ էր «Ա1+» հեռուստաընկերութեան եթեր վերադարձը կանխելու համար:

Յուլիսի 20-ին, երբ արդէն պէտք է յայտնի դառնան մրցոյթի պայմանները, շուրջ երեք ամիս է մնացել, սակայն մինչ այժմ թուայնացման մասին օրէնք գոյութիւն չունի, եւ պարզ էլ չէ՝ այն ընդունուած կը լինի՞ մինչեւ Յուլիսի 20-ը: Գրիգոր Ամալեանի հաւաստմամբ՝ ընդունուած լինի օրէնքը թէ ոչ, անկախ ամէն ինչից՝ մրցոյթներն անցկացուելու են:

Մեսրոպ Մովսիսեանի պնդմամբ, սակայն, յանձնաժողովի նախագահի յայտարարութեան մէջ արդէն կայ թիւրիմացութիւն. - «Եթէ լինի օրէնքը թուայնացման՝ պէտք է այդ օրէնքով անցկացուի, եթէ չլինի՝ ուրեմն հին օրէնքով պէտք է անցկացուի, հին կարգավիճակով: Եթէ անցկացւում է ըստ թուայնացման օրէնքի՝ այս դէպքում որտեղի՞ց յայտնուեցին այդ յաճախութիւնները, եթէ կան գործող հեռուստաընկերութիւններ. [Ամալեանը] միշտ յայտարարել է, որ չկայ, չէ՞, որեւէ ազատ յաճախութիւն»:

«Ա1+»-ը եթերազրկուել է 2002 թուականի Ապրիլի 1-ից: Անցած տարիների ընթացքում «Ա1+»-ը մասնակցել է հեռարձակման լիցենզաւորման 10-ից աւելի մրցոյթների եւ բոլոր դէպքերում Հեռուստատեսութեան եւ ռադիոյի ազգային յանձնաժողովի որոշմամբ լիցենզիա չի ստացել:

Մարդու իրաւունքների եւրոպական դատարանը 2008 թուականի Յունիսի 17-ի որոշմամբ հաստատեց, որ «Ա1+»-ի պարագայում

Շար.ը էջ 5

# «2004Թ. ԱՊՐԻԼԻ 12-Ի ՅԱՆՑԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՄՆԱՑ ԱՆՊԱՏԻԺ»

2004թ. Ապրիլի 12-ին քոչարեանական վարչախումբը Հայաստանի Հանրապետութեան պատմութեան մէջ առաջին անգամ բռնի ուժ գործադրեց խաղաղ ցուցարարների դէմ: Այս մասին ասւում է Հայ ազգային կոնգրէսի տարածած յայտարարութիւնում: Նշւում է, որ ցոյցը վարչախմբից ընդամէնը պահանջում էր կատարել Սահմանադրական դատարանի մէկ տարի առաջ ընդունած որոշումը: «Բաղրամեան պողոտայում անզէն ու խաղաղ ցուցարարների վրայ յարձակուեցին յատուկ միջոցներով զինուած ոստիկաններ՝ որպէս բազա ունենալով Ազգային ժողովի բակը: Տեղի ունեցաւ դաժան ջարդ: Բազմաթիւ մարդիկ, այդ թւում նաեւ կանայք եւ տարեց մարդիկ ստացան մարմնական վնասուածքներ, շուրջ 200 հոգի ձերբակալուեցին: Ջարդից յետոյ անմեղ մարդիկ ենթարկուեցին դատական պատասխանատուութեան, յանցագործները մնացին անպատիժ»,- ասւում է յայտարարութիւնում:

Ըստ ՀԱԿ-ի՝ ապրիլի 12-ին կատարուած յանցագործութիւնը մնաց անպատիժ: «Դա այն, թերեւս, ամենակարեւոր հանգամանքներից մէկն էր, որից ոգեշնչուած, նոյն բռնապետութիւնը կրկնեց այն 2008-ի Մարտի 1-ին՝ այս անգամ աւելի դաժան եւ արդէն հրազէնի օգտագործմամբ, ինչին զոհ գնաց 10 քաղաքացի: Այսօրինակ ոճրագործութիւնները, անպատիժ մնալով, կրկնուելու հնարաւորութիւն ունեն: Ուստի եւ, ինչպէս մարտիմէկեան, այնպէս էլ ապրիլի 12-ի յանցագործները անպայման պատասխանատուութեան պէտք է ենթարկուեն՝ յանուն արդարութեան, յանուն օրինականութեան, յանուն հայկական պետականութեան գոյատեւման»,- նշւում է ՀԱԿ յայտարարութիւնում:

# ՄԵՍՐՈՊ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ.- «ԼՐԱՏՈՒԱՄԻՋՈՑՆԵՐԻՆ ԼՌԵՑՆՈՂ ՕՐԻՆԱԳԻԾԸ ՊԷՏՔ Է ՎԵՐԱՆԱՅՈՒԻ»

Խորհրդարանում այսօր կազմակերպուած լսումների ժամանակ «ՀՀ քաղաքացիական օրէնսգրքում փոփոխութիւններ եւ լրացումներ կատարելու մասին» օրինագծի մասին ելոյթ է ունեցել Խօսքի ազատութեան պաշտպանութեան կոմիտէի փորձագէտ Մեսրոպ Յարութիւնեանը: Օրինագծի մասին միակ գովելի բանը, ինչպէս յայտարարել է փորձագէտը, այն է, որ զրպարտութիւնն ու վիրաւորանքը պէտք է ապաքրէականացուեն:

«Սկսեմ նրանից, որ ես կողմնակից եմ զրպարտութեան եւ վիրաւորանքի ապաքրէականացմանը: Այս մէկ նախադասութեամբ աւարտւում են իմ դրուատանքի խօսքերն այսօր քննարկուող օրինագծերի վերաբերեալ, որովհետեւ, «ՀՀ քաղաքացիական օրէնսգրքում փոփոխութիւններ եւ լրացումներ կատարելու մասին» օրինագիծը ներկայացուած տեսքով, իմ կարծիքով, նախ հակասում է ՀՀ Սահմանադրութեանը, Եւրոպական կոնվենցիայի 10-րդ յօդուածին եւ ՀՀ գործող օրէնսդրութեանը, եւ երկրորդ առաջարկուող ձեւակերպումները մեկնաբանութիւնների եւ տարընթերցումների հսկայական տեղ են թողնում, ինչն էլ հզօր զէնք է դառնալու իշխանութեան եւ դատարանների ձեռքին՝ լռեցնելու անցանկալի լրատուամիջոցներին: Եւ ինչքան էլ հեղինակները պնդեն, թէ այս օրինագիծը միայն ԶԼՄ-ներին չի վերաբերում եւ նրանց լռեցնելու նպատակ չի հետապնդում, այդ նպատակը յստակօրէն երեւում է հենց միայն նրանից, որ ԶԼՄ-ների համար տուգանքները քառապատիկ կամ կրկնակի աւելի են նախատեսուած»,- իր խօսքի սկզբում նշել է Մեսրոպ Յարութիւնեանը:

Նա օրինակներով ներկայացրել է այն հակասութիւնները, որոնք ունի առաջարկուող օրինագիծը, ապա եւ հանդէս եկել առաջարկութիւններով:

Մասնաւորապէս փորձագէտն առաջարկել է հանել օրինագծից այն կէտերը, որոնցով զրպարտութեան եւ վիրաւորանքի համար լրատուամիջոցը պարտաւորւում է փոխհատուցում տալ:

Մեսրոպ Յարութիւնեանն առաջարկել է օրինագծում ձեւակերպել, որ կարծիքի եւ գնահատող դատողութեան համար չի կարող պատասխանատուութիւն սահմանուել, եթէ դա հիմնուած է ստոյգ փաստերի վրայ:

# ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ.«ԷԲԵՐՏԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ ԿԱՐՈՂ Է ՈՒՆԵՆԱԼ»

*ԱԺ պատգամաւոր, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան անդամ Վարդան Խաչատրեանը, ով վերջերս է վերադարձել Մոսկուայից, Haynews.am-ի հետ զրոյցում յայտնեց, որ միայն այնտեղ է իմացել Բրիւսելում կայացած բաւական արտառոց մի քննարկման մասին, որը կազմակերպել է Հայաստանի համար տխրահռչակ «Էբերտի հիմնադրամը»: Ըստ ԱԺ պատգամաւորի, քննարկումը միտուած էր «գտնել լուծումներ յետխորհրդային տարածքում չլուծուած (սառեցուած) հակամարտութիւնների խնդիրների շուրջ»:*

*Վարդան Խաչատրեանը նշեց, որ առնուազն տարօրինակ է, այն հանգամանքը, որ յետխորհրդային երկրների սառեցուած հակամարտութիւններով է զբաղւում մի հիմնադրամ, որ բազմիցս դրսեւորել է ընդգծուած ադրբեջանամէտ դիրքորոշում: Այսպէս, սա այն նոյն հիմնադրամն է, որ ուսումնասիրութիւններ անցկացրեց Արցախում եւ «ստացած խճանկարը անսքօղ կերպով ներկելով ադրբեջանական լրատուութեանը իւրայատուկ հակահայ գոյներով, ներկայացրեց միջազգային հանրութեանը»:*

*ՍԴՀԿ վարչութեան անդամ Վարդան Խաչատրեանը խօսելով պատերազմի հնարաւոր վերսկսման մասին, նշեց.«Դրա հաւանականութիւնը շատ ցածր եմ համարում, քանի որ Ադրբեջանի քաղաքական ղեկավարութիւնը շատ լաւ հասկանում է՝ ինչ անկանխատեսելի հետեւանքներ կարող է ունենալ պատերազմը իրենց իսկ համար: Ճիշդ է, Հայաստանում նոյնպէս կան բազմաթիւ խնդիրներ, սակայն Ադրբեջանում հասարակական արդարութեան դեֆիցիտն այնքան մեծ է, որ այդ երկրի ժողովուրդը չի բաց թողնի պահը՝ Ալիեւեան կլանից ազատուելու համար»:*



**Պատգամաւոր, ՍԴՀԿ-ի անդամ Վարդան Խաչատրեան**

*Ինչ վերաբերւում է ադրբեջանական քաղաքական եւ ռազմական վերնախաւի յոխորտանքներին, ապա ըստ Հնչակեան գործչի, «պէտք չէ մոռանալ, որ Հայաստանը ՀԱՊԿ անդամ է, իսկ իւրաքանչիւր պատերազմ, որ սանձազերծւում է ՀԱՊԿ անդամ երկրի դէմ, սանձազերծւում է հենց ՀԱՊԿ-ի դէմ: Իսկ այն փաստը, որ Ադրբեջանը ՆԱՏՕ-ամէտ ՎՈՒԱՄ-ի անդամ է, եւս մէկ անգամ աւելի խոցելի է դարձնում նրա դիրքերը»:*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆԿԱՐԱՅԻՆ ԿՈՉ ԵՆ ԱՆՈՒՄ ՀՐԱԺԱՐՈՒԵԼ 301 ՅՕԴՈՒԱԾԻՑ

*Մարդու իրաւունքների միջազգային ֆեդերացիայի համաժողովին մասնակցող՝ Հայաստանի եւ Թուրքիայի անդամ կազմակերպութիւններն հանդէս են եկել համատեղ յայտարարութեամբ՝ մասնաւորապէս, կոչ անելով Թուրքիային ազատուել խօսքի ազատութիւնը սահմանափակող ՔՕ 301 յօդուածից:*

*«Համոզուած ենք, որ մարդու իրաւունքների պաշտպանութիւնը Թուրքիայում եւ Հարաւային Կովկասում տարածաշրջանի բոլոր երկրներում խաղաղասէրծ գործընթացի, հաշտեցման եւ բարիդրացիական յարաբերութիւնների գրաւականն է եւ նպատակ ունի երաշխաւորել սահմանների բոլոր կողմերում բնակուող անձանց անվտանգութիւնը, բարեկեցութիւնն ու արժանապատուութիւնը:*

*Կոչ ենք անում Հայաստանի եւ Թուրքիայի իշխանութիւններին եւ հասարակութիւններին համատեղել ջանքերը եւ ապահովել այնպիսի միջավայր եւ գործընթացներ, որ թոյլ կը տան հատուցել անցեալում տեղի ունեցած մարդու իրաւունքների ոտնահարումների, այդ թւում՝ ազգութեան, կրօնի եւ այլ հիմքերով խտրականութեան համար, ինչպէս նաեւ հաւատարիմ մնալ միջազգային իրաւական փաստաթղթերով ամրագրուած մարդու իրաւունքների պաշտպանութեան չափանիշներին:*

*Տարածաշրջանում դէպի մարդու իրաւունքները յարգանքն ապահովելու նպատակով հայցում ենք խօսքի ազատութիւն բոլոր երկրներում եւ առաջարկում ենք հրաժարուել բոլոր այն օրէնքներից եւ գործողութիւններից, որ սահմանափակում են խօսքի ազատութեանը, մասնաւորապէս՝ հայ-թուրքական երկխօսութեանը խոչընդոտող Թուրքիայի Քրէական օրէնսգրքի 301 յօդուածից:*

*Յորդորում ենք Թուրքիայի եւ Հայաստանի իշխող եւ ընդդիմադիր բոլոր քաղաքական ուժերին կատարել իրենց պարտքը եւ ձեռնարկել երկու պետութիւնների եւ հասարակութիւնների միջեւ յարաբերութիւնները կարգաւորելուն ուղղուած բոլոր անհրաժեշտ քայլերը, մասնաւորապէս իրականացնելով դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու եւ սահմանները բացելու վերաբերեալ երկկողմանի արձանագրութիւնը: Այս ուղղութեամբ առաջընթացը եւ Թուրքիայում ժողովրդավարական ձեւափոխումների գործընթացը բարենպաստ միջավայր կը ձեւաւորեն Հայոց Ցեղասպանութեան ցաւալի խնդրին անդրադառնալու համար:*

*Մենք դատապարտում ենք տարածաշրջանի պետութիւնների որոշ կառոյցների ռազմատենչ յաւակնութիւններով սնուող թշնամանքի բոլոր ձեւերն ու դրսեւորումները:*

*Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ յարատեւ խաղաղութիւն հաստատելու եւ ապագայում փոխադարձ թշնամանք կանխելու նպատակով կոչ ենք անում երկու պետութիւնների կառավարութիւններին վաւերացնել եւ կատարել Հռոմի՝ Միջազգային քրէական դատարանի կանոնադրութիւնը:*

# ՕՊԱՄԱ-ՍԱՐԳՍԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

*Շարունակուած էջ 1-էն*

*համաձայն, կողմերը քննարկած են Ռեջէփ Թայիփ Էրտողանի, անցեալ շաբաթ Սերժ Սարգսեանին յղած նամակը: «Սապահ» օրաթերթը մանրամասնութիւններ հաղորդելով կը տեղեկացնէ որ, Թուրքիոյ վարչապետը Սերժ Սարգսեանին ըսած է որ, եթէ արձանագրութիւնները մտցուին թրքական խորհրդարանի օրակարգ, մինչ Միացեալ Նահանգներու եւ Շուէտի խորհրդարանները տուեալ հարցով որոշումներ կ'ընդունին, անոնք կրնան մերժուիլ:*

*Թուրքիոյ վարչապետը ըսած է, թէ ամէն ոք պէտք է ձեռնպահ մնայ այնպիսի յայտարարութիւններէ, որոնք կրնան վնաս հասցնել Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ ստորագրուած արձանագրութիւններուն:*

*Հայ-Թրքական բանակցութիւններու աւարտին Սերժ Սարգսեան այցելած է Ուաշինկթընի Մայր Տաճար՝ ծաղկեպսակ դնելու Միացեալ Նահանգներու 28-րդ նախագահ Վուտրօ Ուիլսընի շիրիմին: Արարողութեան ներկայ եղած են նաեւ ամերիկահայեր, որոնց դիմելով Սերժ Սարգսեան ըսած է. - «Մեր դիրքորոշումը եղել եւ մնում է շատ յստակ. Թուրքիան չի կարող նախապայմանների լեզուով խօսել Հայաստանի հայութեան հետ: Մենք դա պարզապէս թոյլ չենք տայ»:*

*«Մենք չենք պատրաստւում որեւէ ձեւաչափում քննութեան առարկայ դարձնել Ցեղասպանութեան եղելութեան փաստը կամ ձեւացնել, թէ հաւատում ենք, որ Թուրքիան կարող է որեւէ դրական դերակատարութիւն ունենալ Ղարաբաղի հիմնախնդրի կարգաւորման բանակցային գործընթացում», - ըսած է Սարգսեան ու աւելցուցած- «Ցանկացած նոր արտաքին քաղաքական ուղեգիծ ենթակայ է փորձութիւնների, որովհետեւ մենք անցնում ենք չտրորուած արահետով: Ես վստահ եմ, որ Հայաստանը պատուով է բռնելու այս քննութիւնը»:*

*Ուաշինկթընի Ճորճ Մէյսըն համալսարանէն ներս «Իսլամական Հետազօտութիւններու Կենտրոնի» բացման արարողութեան առթիւ ելոյթ ունենալով, Թուրքիոյ վարչապետ Էրտողան անդրադարձած է Հայոց Ցեղասպանութիւնը ճանչցող խորհրդարանական վերջին բանաձեւերուն ու ըսած է. - «Պատմութիւնը խորհրդարաններու մէջ չէ որ կը գրուի եւ չի կրնար դառնալ խորհրդարաններու դատապարտման առարկայ: Մենք բացինք մեր բոլոր արխիւները, հանդէս եկանք պատմաբաններու յանձնաժողով ստեղծելու առաջարկով, սակայն ոչ մէկ պատասխան այդպէս էլ չստացանք: Խորհրդարաններու կողմէ կայացուած որոշումները Հայաստանին օգուտ չեն բերեր»:*

# ՂԱՐԱԲԱՂԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՆԴԸ

*Լեռնային Ղարաբաղի նախկին արտգործնախարար Արման Մելիքեանն այսօր լրագրողների հետ հանդիպմանը յայտարարեց, որ ինքը դէմ է ԼՂ վերադարձին բանակցային սեղանի շուրջ, քանի դեռ շարունակւում է բանակցային ներկայ օրակարգը:*

*«Ղարաբաղի իշխանութիւնները դարձել են Հայաստանի կողմից վարուող քաղաքականութեան պատանդը»,- ասաց Մելիքեանը:*

*Արման Մելիքեանի խօսքով՝ «ներկայ բանակցային գործընթացը ելնում է նրանից, որ պատերազմը հրահրել է Հայաստանը»:*

*«Ներկայիս բանակցային օրակարգն սկսւում է 1992 -ից, մինչդեռ իրական խնդիրն առաջացել է 1988թ., երբ ադրբեջանցիների բռնաճնշումներին Ղարաբաղի ժողովուրդը հակադրեց անկախ ապրելու իր իրաւունքը, ինչն էլ պատճառ դարձաւ Ադրբեջանի կողմից պատերազմի սանձազերծմանը»,- ասաց նա:*

*ԼՂ նախկին արտգործնախարարն ընդգծեց, որ ղարաբաղեան կարգաւորման բանակցային գործընթացի տրամաբանութիւնը սխալ է. եթէ բանակցութիւնները ճիշդ կէտից սկսուած լինէին, ապա միջազգային հանրութեանը հնարաւոր կը լինէր ճիշդ ներկայացնել խնդիրը:*

# ՍՏՈՒԵՐԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՌՈՒՄՈՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԸ «ՀԵՌՈՒ Է ԲԱՐՒՈՔ ԼԻՆԵԼՈՒՑ»

*Արժոյթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) նորանշանակ մշտական ներկայացուցիչ Գիերմօ Տոլոսա յայտարարեց որ թէեւ ԱՄՀ-ը մշտապէս իր ուշադրութեան տիրոյթում է պահում արդիւնաւէտ հարկային վարչարարութեան ապահովման հարցը, ստուերայնութեան առումով Հայաստանում իրավիճակը «հեռու է բարւոք լինելուց»:*

*Արժոյթի միջազգային հիմնադրամի մշտական ներկայացուցիչը, կարեւոր համարեց Հայաստանի պետեկամուտների կոմիտէի՝ խոշոր հարկատուներով զբաղուող ստորաբաժանման առաւել մեծ ներգրաւուածութիւնն ու դերը, այս հատուածում հարկային վարչարարութեան բարելաւման ուղղութեամբ:*

*«Մենք աջակցում ենք Պետեկամուտների կոմիտէի այդ ստորաբաժանման ջանքերին», - յայտարարեց Տոլոսան:*

*Հայաստանի ֆինանսների նախարարութեան հրապարակած վերջին տուեալներով, այս տարուայ Յունուար - Փետրուար ամիսներին, ի համեմատ նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի, գրանցուել է հարկային մուտքերի 19 տոկոսի աճ: Զարգացած երկրներում, ի դէպ, ՀՆԱ - հարկային մուտքեր յարաբերակցութիւնը սովորաբար տատանւում է 30-50 տոկոսի սահմաններում: Հայաստանի պարագայում, մինչդեռ, այդ ցուցանիշը կազմում է ընդամէնը 16 տոկոս:*

**ՄԱՍԻՍ**
**ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ**

## ՀԱՅԱՍՏԱՆ

# ՎԱՐՉԱՊԵՏՆ ՈՒ ԲԻԶՆԵՍ ՄԻՋԱՎԱՅՐԸ

***ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ***

*Վարչապետ Տիգրան Սարգսեանի պաշտօնանկութիւնը բացառող յայտարարութիւնը, որ արեց Սերժ Սարգսեանն Ապրիլի 9-ին, թերեւս կարելի է համարել բնական: Եթէ Սերժ Սարգսեանը շարունակէր լռել Տիգրան Սարգսեանի մասին, ինչպէս նաեւ եթէ փորձէր մի փոքր թէկական արտայայտուել նրա հետագայ պաշտօնավարութեան վերաբերեալ, ապա դրանով ի ցոյց կը տար իր թուլութիւնն ու իրավիճակին չտիրապետելը: Բանն այն է, որ Տիգրան Սարգսեանին անվերապահ սատարելուց բացի որեւէ այլ դիրքորոշում է կամ լռութիւնը Սերժ Սարգսեանի համար կը լինէր նահանջ, տեղատուութիւն:*

*Այսինքն, Տիգրան Սարգսեանին սատարելու գործում փաստացի դեր է կատարում ոչ այնքան կառավարութեան գործունէութեան արդիւնաւէտութիւնը, որքան Սերժ Սարգսեանի քաղաքական շահը: Երբ նոյնիսկ իշխանական եւ իշխանամերձ շրջանակներից են ուղղակի եւ անուղղակի քննադատական ալիքներ գալիս դէպի Տիգրան Սարգսեանը, երբ այդ ալիքի կատարին նաեւ Ռոբերդ Քոչարեանն է ինչ որ ձեւով նշմարւում, ապա Սերժ Սարգսեանը Տիգրան Սարգսեանին անվերապահ սատարելուց բացի որեւէ այլ քայլ չի կարող անել, քանի որ դա կը նշանակի տեղի տալ այդ ալիքին:*

*Ահա այդ առումով Սերժ Սարգսեանի յայտարարութիւնը միանգամայն հասկանալի է ու տրամաբանական: Իսկ ահա այն բացատրութիւնները, որոնք բերւում են իբրեւ վարչապետին աջակցելու հրապարակային, այսպէս ասած պաշտօնական հիմնաւորում, թէ տնտեսութիւնն արդէն վերականգնման փուլում է, թէ կառավարութիւնը կարողանում է կատարել բիւջէի սոցիալական պարտաւորութիւնները, եւ այլն, մեծ հաշուով անհասկանալի են: Բանն այն է, որ ամէն ինչ կախուած է նրանից, թէ ինչ նշաձող է սահմանւում կառավարութեան համար: Օրինակ, եթէ կառավարութեան հիմնական անելիքը համարւում է թոշակը, նպաստն ու ու աշխատավարձն առանց ուշացնելու բաժանելը, ապա իհարկէ, կարելի է սահմանել այդ նշաձողն ու ասել, որ ունենք աշխարհի ամենապունկտուալ եւ յաջողակ կառավարութիւնը: Թէեւ այդ մասով անգամ կան խնդիրներ: Բանն այն է, որ այդ սոցիալական պարտականութիւնները կատարւում են նաեւ արտաքին պարտքի հաշուին: Արժոյթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ) պաշտօնեաներն են մի քանի անգամ խոստովանել, որ Հայաստանի պարագայում չեղւում են կանոնից եւ վարկ են տալիս ոչ միայն արտաքին պահուստների համալրման համար, այլ նաեւ բիւջէտային ծախսերի: Այնպէս որ, նոյնիսկ թոշակ ու նպաստ բաժանելու հարցում կառավարութիւնը չի կարողանում լիարժէք կատարել իր պարտականութիւնը, եթէ չլինի ԱՄՀ վարկաւորումը:*

*Բայց կարելի է իհարկէ կառավարութեան գործունէութեան նշաձող սահմանել նաեւ պարտք վերցնելը: Այսինքն, որ կառավարութիւնը լաւ պարտք է կարողանում վերցնել արտաքին կառոյցներից, ուրեմն այդ կառավարութիւնն էլ ամենաարդիւնաւէտն է: Ի դէպ, այդ հանգամանքը եւս առկայ է այն հարցում, որ Սերժ Սարգսեանը պաշտօնանկ չի անում Տիգրան Սարգսեանին: Բանն այն է, որ Հայաստանն այժմ խիստ մեծ կախուածութեան մէջ է միջազգային ֆինանսական կառոյցներից: Իսկ այդ կառոյցները բացայայտ աջակցում են Տիգրան Սարգսեանի քաղաքականութեանը: Հետեւաբար, եթէ Տիգրան Սարգսեանը պաշտօնանկ արուի, ապա Հայաստանը կարող է լուրջ խնդիրներ ունենալ միջազգային կառոյցների տրամադրելիք վարկերի առումով: Դժուար է ասել, թէ էլ ով կայ Հայաստանի իշխանական վերնախաւում, որը կարող է վայելել այդ կառոյցների նոյն հաւանութիւնն ու աջակցութիւնը: Այդ իսկ պատճառով, Սերժ Սարգսեանի աջակցութեան հիմքում նաեւ առկայ է թերեւս այդ գործօնը:*

*Իհարկէ, տրամաբանութիւնը յուշում է, որ ի վերջոյ, ցանկացած երկրի կառավարութեան պարագայում առաջնայինը, որոշիչը, թելադրողը պէտք է լինի հանրային լեգիտիմութեան գործօնը: Այսինքն, վարչապետը պէտք է մնայ կամ չմնայ ոչ թէ այն պատճառով, որ դա է պահանջում նախագահի քաղաքական շահը, կամ միջազգային ֆինանսական կառոյցների հետ յարաբերութեան կայունութիւնը, այլ որ դա է պահանջում հասարակութիւնը, հանրութեան շահը: Բայց, նորմալ, քաղաքակիրթ, կայացած պետութիւններում իրավիճակն այնպիսին է, որ թէ՛ նախագահի քաղաքական շահը, թէ՛ միջազգային որեւէ կառոյցի կամ պետութեան հետ փոխյարաբերութիւնը, յանգեցուել են հանրութեան շահին: Այսինքն, դրանք, փաստացի հակասութեան մէջ չեն մտնում հասարակական շահի հետ: Ասենք, նախագահի քաղաքական շահը պահանջում է, որ նրա նշանակած կառավարութիւնը վայելի հասարակութեան շահը, ոչ թէ շարունակի աշխատել ի հեճուկս հասարակութեան եւ ի սարսափ նախագահի տնտեսա-քաղաքական մրցակիցների կամ հակառակորդների:*

*Մինչդեռ Հայաստանում հենց այդ իրավիճակն է: Բանն այն է, որ կառավարութեան աշխատանքի լաւագոյն գնահատականը պէտք է լինի ոչ թէ այն, որ կարող էր աւելի վատ լինել, այլ այն, թէ ինչու լաւ չէ: Օրինակ, նոյն միջազգային ֆինանսական կառոյցի ներկայացուցիչ՝ ԱՄՀ Երեւանի գրասենեակի նորանշանակ ղեկավար Կիյերմօ Թոլոսան յայտարարում է, որ կառավարութեան հակաճգնաժամային ծրագիրը լաւն է, եւ թէեւ քաղաքացիները զգացել են ճգնաժամի ազդեցութիւնը, բայց եթէ կառավարութիւնն այդ քայլերը չանէր, ապա ճգնաժամի ազդեցութիւնն աւելի մեծ կը լինէր: Այդօրինակ կարծիքներից յետոյ թերեւս պէտք է Հայաստանի քաղաքացիները դատական հայցով դիմեն դատարան, իրենց գրպարտելու կամ վիրաւորելու համար՝ այդպիսով գոնէ մի քիչ ֆինանսական փոխհատուցում ստանալով եւ գոնէ այդ ձեւով միջազգային ֆինանսական կառոյցների գործունէութիւնից մի դրական բան ունենալով, քանի որ այդօրինակ կարծիք արտայայտողները Հայաստանի քաղաքացիներին կարծես թէ դնում են տգէտի տեղ: Իհարկէ, ցանկացած տարրական կրթութիւն ունեցող մարդ գիտէ, որ եթէ ճգնաժամի ժամանակ ոչինչ չանես եւ ամէն ինչ թողնես ինքնահոսի, ապա վիճակն աւելի վատ կը լինի, քան եթէ իրականացնես թէկուզ վատ տնտեսական քաղաքականութիւն: Բայց մի՞թէ դա բանական չափանիշ է, որ դրւում է իբրեւ կառավարութեան գործունէութեան գնահատականի հիմք:*

*Իսկ ո՞վ պէտք է պատասխանատու լինի Հայաստանում բիզնես միջավայրի համար, ո՞վ պէտք է պատասխանատու լինի այն բանի համար, որ Հայաստանում փոքր ու միջին բիզնեսը յայտնուել է խոշորների երախի չեմին, քանի որ հարկային վարչարարութեան մահակը իջնում է հենց փոքր ու միջին ձեռնարկութիւնների գլխին: Ու մի՞թէ զաւեշտալի չէ, երբ այդքանից յետոյ, երբ երկու տարի շարունակ այդօրինակ տնտեսական քաղաքականութիւն վարելուց յետոյ վարչապետ Տիգրան Սարգսեանը յանկարծ յայտարարում է, որ ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, թէ Հայաստանի հարկային բեռը խոշորների ուսերից ընկել է փոքր ու միջին բիզնեսի ուսերին: Մի՞թէ այդ դէպքում տրամաբանական չէ հարցը, թէ պարոն վարչապետ, իսկ ո՞վ է դրա համար պատասխանատու: Իսկ ի՞նչն է պատճառը, որ յանկարծ այդպէս է ստացուել: Գուցէ այն, որ եթէ երկրում կոռուպցիայի մակարդակը չափազանց մեծ է եւ հասնում է մինչեւ իշխանութեան ամենաբարձր պաշտօնեաներ, եթէ կայ բիզնեսի եւ իշխանութեան խիստ սերտաճում, չարժէ ստուերի դէմ պայքարը սկսել տօնավաճառներում առեւտուր անողներից եւ մանր ու միջին բիզնեսի այլ օբիեկտներից: Գուցէ այդ դէպքում աւելի լաւ է դրանք մնան ստուերում, որ կարողանան մի քիչ շնչել խոշորների հետ դաժան պայքարում, եթէ իշխանութիւնը չունի քաղաքական կամք՝ փոքր ու միջին բիզնէսին զուգահեռ, ստուերից հարկային դաշտ բերել նաեւ խոշոր բիզնեսը: Թե չէ ի՞նչ արժէք ունեն հերթական յայտարարութիւններն այն մասին, որ խոշոր բիզնեսի ոլորտում կան հարկային վարչարարութեան արդիւնաւէտութեան խնդիրներ:*

*Կառավարութեան, իշխանութեան գործողութիւնները պէտք է չափուեն այդ հիմնարար խնդիրների դիտարկման համատեքստում, ոչ թէ թոշակ կամ աշխատավարձ բաժանելու: Դա իհարկէ շատ կարեւոր է, յատկապէս սոցիալապէս անապահով խաւերի համար, որոնց զգալի մասը հենց միայն այդ թոշակի, նպաստի եւ աշխատավարձի յոյսին է: Բայց, ի վերջոյ, հենց այդ խաւերի կեանքը բարելաւելու եւ նրանց թոշակի ու նպաստի "ասեղի" վրայից հանելու համար էլ պէտք է, որ երկրում կառավարութեան, իշխանութեան գործունէութեան արդիւնաւէտութիւնը չափուի համակարգային քայլերի, համակարգային բարեփոխումների սանդղակով: Պէտք է խնդիրը դիտարկել ոչ թէ 15 տոկոս անկումը գոնէ մի 2 տոկոս աճով փոխարինելու եւ դա քարոզչական հումքի վերածելու տրամաբանութեան մէջ, այլ Հայաստանում տնտեսա-քաղաքական կեանքի որակական փոփոխութիւնների տրամաբանութեան:*

*Բայց հազիւ թէ իշխանութիւնը չի գիտակցում այդ ամէնի անհրաժեշտութիւնը: Պարզապէս դրան զուգահեռ իշխանութիւնը գիտակցում է նաեւ, որ համակարգային փոփոխութեան, համակարգային որակների փոփոխութեանն ուղղուած քայլերը պահանջելու են կոնկրետ "զիջումներ" հենց այդ իշխանական համակարգից, այնտեղ գործող խմբերից ու կլաններից: Զարմանալի է, բայց առկայ է մի տարօրինակ հակասութիւն: Օրինակ, երբ խօսք է գնում Ղարաբաղի հարցի մասին, նոյն իշխանութիւնը սիրում է յայտարարել, որ տեւական խաղաղութեան, տարածաշրջանային զարգացման համար պէտք է գնալ նաեւ դիմացինի՝ այսինքն Ատրպէյճանի շահը հաշուի առնելուն եւ փոխադարձ զիջումների: Իսկ երբ խօսքը գնում է երկրի ներքին կեանքի զարգացման հարցում երկարաժամկէտ հեռանկարների ձեւաւորման մասին՝ ազատ մրցակցութիւն, տնտեսական եւ քաղաքական մենաշնորհների չէզոքացում, բիզնեսի եւ իշխանութեան տարանջատում, իշխանութիւնը, չգիտես ինչո՛ւ, չի դրսեւորում նոյն ՀԵՌԱՏԵՍՈՒԹԻՒՆԸ եւ չի փորձում հաշուի առնել դիմացինի, այսինքն Հայաստանի քաղաքացու շահը եւ գնալ զիջումների, առաւել եւս այն դէպքում, երբ այդ զիջումներն արդէն ոչ թէ կամքի կամ մարդասիրութեան խնդիր են, այլ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան եւ օրէնքների պահանջ:*

# ՀԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱՄԱԿԸ

*Շարունակուած էջ 1-էն*

*իրաւունքները:*

*«Նախագահ Օպամա, Ամերիկահայութիւնը կը պնդէ որ ընէք այն, ինչ որ կը նպաստէ մարդկային իրաւունքներուն եւ ժողովրդավարութեան. Քաջալերէ՛ք ժողովրդավարական բարեփոխումները տարածաշրջանէն ներս եւ 95 ամեակի առթիւ յարգէք՝ Հայկական Ցեղասպանութիւնը ճանչնալու Ձեր խոստումը, Ապրիլ 24, 2010-ին»:*

# «Ա1+»-Ի ՂԵԿԱՎԱՐԸ ԱԿՆԿԱԼԻՔ ՉՈՒՆԻ

*Շարունակուած էջ 3-էն*

*խախտուել է հեռուստաընկերութեան՝ ազատօրէն տեղեկութիւններ եւ գաղափարներ տարածելու իրաւունքը, եւ Հայաստանի Հանրապետութեանը պարտաւորեցրեց 30 հազար եւրօ վճարել «Ա1+»-ին որպէս վնասի եւ դատական ծախսերի հատուցում:*

*Եւրադատարանի որոշումից ամիսներ անց՝ 2008 թուականի Սեպտեմբերի 10-ին, Հայաստանի Ազգային ժողովը լրացում կատարեց «Հեռուստատեսութեան եւ ռադիոյի մասին» օրէնքում եւ երկու տարով դադարեցրեց հեռարձակման լիցենզաւորման մրցոյթների անցկացումը՝ երկրում հեռուստատեսութեան թուայնացման գործընթաց սկսելու պատճառաբանութեամբ:*

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹԱԼԱՆՈՂՆԵՐԸ

ԼՈՒՍԻՆԷ ԲԱՐՍԵՂԵԱՆ
(Շարունակուած նախորդ թիւէն)

## Բարսեղ Բեգլարեան



Ծագումով ղարաբաղցի Ֆլեշ Բարսեղը Սերժ Սարգսեանի գլխաւոր բիզնես գործընկերներից մէկն է: Նա դէ յիւրէ տիգվառելիքի շուկայում խոշորագոյն «Ֆլեշ» ընկերութեան սեփականատէրն է: ՀՀ նաւթամթերքների շուկայում ապահովում է պենզինի աւելի քան մէկ քառորդ մասը: Նրան է պատկանում «Արզնի» թռչնաբուծական ֆաբրիկայի բաժնետոմսերի 45 տոկոսը, խոշորագոյն «Ղարաբաղ գոլդ» ընկերութեան բաժնետոմսերի 55 տոկոսը, «Ֆլեշ+» ընկերութեան 80 տոկոսը, «Ալյանս» ապահովագրական ընկերութեան 10.5 տոկոսը: Ֆլեշ Բարսեղն ունի 56 բենզալցակայան, որոնցից 12-ը՝ Երեւանում, 40-ը՝ մարզերում, 4-ը՝ ԼՂ-ում: «Արարատ» պանքի համասեփականատէրերից մեկն է: Մաքսային ծառայութեան տուեալներով, վճարուող եկամտահարկի հիման վրայ 2005-ին ՀՀ-ում ամենահարուստ մարդն էր:

## Վոլոդիա Բադալեան



Ռոբերտ Քոչարեանի խնամի, նրա խոշոր գործընկեր, ԱԺ պատգամաւոր Վոլոդիա Բադալեանը Սպիտակի շաքարի գործարանի նախկին տնօրէնն է: Նրա ձեռքի տակով է անցել այնպիսի խոշոր քիմիական ձեռնարկութիւնների սեփականաշնորհումն ու վերավաճառումը, ինչպիսիք են «Քիմռեակտիվը» եւ «Պոլիվինիլացետատը»: 2001-ին ստացուած յունական 10 միլիոնանոց վարկի յափշտակիչներից մէկն է: Վարկը «Արդշինբանկի» միջոցով իւրացուել է ՀՀ ագրոարդիւնաբերողների եւ սերմնաբուծութեան միութեան կողմից: Բադալեանը նաեւ եղել է Քոչարեանի ու Սահակաշվիլիի միջեւ կնքուած հայ-վրացական գաղտնի գործարքների կնքահայրը: Այդ բարեկամութեան եւ հովանաւորութեան շնորհիւ միջնորդաւորուած անձանց միջոցով վրացական կապիտալը լուացման համար ներթափանցել է ՀՀ, իսկ հայկականը՝ Վրաստան: ՀՀ-ի կողմից հանդիսանում է «Հայ-ռուսական գործարար համագործակցութեան ասոցիացիայի» անդամ, որի միջոցով Քոչարեանը իր քաղաքական եւ տնտեսական շահերի լոբբինգ էր իրականացնում ՌԴ-ում:

## Սամուէլ Մայրապետեան



Երեւանի բժշկական համալսարանի նախկին պրոռեկտոր Սամուէլ Մայրապետեանը Ռոբերտ Քոչարեանի եւ ՀՀ ներկայիս փոխվարչապետ Արմէն Գէորգեանի գլխաւոր բիզնես-գործընկերներից է: Նրա անունն առաջին անգամ մամուլում յայտնուեց 1995-ին, երբ իրաւապահ մարմինները կաշառակերութեան դէպք բացայայտեցին բժշկական ինստիտուտում: Այնուհետեւ Մայրապետեանը բժշկականից տեղափոխուեց մշակոյթի նախարարութիւն, սակայն Լեւոն Տէր-Պետրոսեանի աշխատակազմի պահանջով Մայրապետեանի պայմանագիրը խզուեց, եւ նա մեկնեց Մոսկուա: Սամուէլ Մայրապետեանը «Հ2» հեռուստաընկերութեան գլխաւոր սեփականատէրն է: Հենց նա Երեւանում, Բայրոնի փողոցի վրայ կառուցեց առաջին էլիտար շէնքը, իսկ հետագայում դարձաւ Քոչարեանի ու Արմէն Գէորգեանի բիզնես-գործընկերը էլիտար շինարարութեան ոլորտում (Երեւանի կենտրոնում նման բնակարանների 1 քմ-ն արժէ 1000 տոլարից ոչ պակաս): Մայրապետեանի կինը՝ բժշկական համալսարանի ներկայիս ռեկտոր Գոհար Քիալեանը, ըստ «The Moscow post»-ի, բաւական կոլորիտային կին է, ընդդիմադիր մամուլի ամենասիրելի հերոսներից մէկը: Մինչ ռեկտորի պաշտօնում ընտրուելը, Քիալեանը, ըստ ռուսական լրատուամիջոցի, մտաւ «Օրինաց երկիր» կուսակցութիւն, քանի որ այն ժամանակուայ ԿԳ նախարարը ՕԵԿ-ական էր: Մայրապետյանը իր տիկնոջը ռեկտոր դարձնելու հարցը լուծեց մի քանի հոգու, այդ թւում ԱԺ նախկին նախագահ Արթուր Բաղդասարեանին, ԿԳ նախկին նախարար Սերգոյ Երիցեանին, Ռոբերտ Քոչարեանի աւագ որդուն՝ Սեդրակ Քոչարեանին էլիտար բնակարաններ նուիրելով: «Նկատենք, որ իր տիկնոջը ռեկտոր դարձնելը, տարբեր գնահատականներով, Մայրապետեանի համար արժեցել է 500 հազար տոլար»,- նշում է «The Moscow post»-ը:

## Լեւոն Սարգսեան



Լեւոն ՍարգսեանԱԺ պատգամաւոր, ՀՀԿ խորհրդի անդամ (Ալրաղացի Լիով) իր ուղին սկսեց Երեւանի ալրաղացից, որի համասեփականատէրն էր ցանկանում դառնալ: Հետագայում նա այդ գործը բարեյաջող աւարտեց 2002-ին: Հինգ տարի անց նա ստիպուած եղաւ վաճառել ալրաղացը: Լեւոն Սարգսեանը կօշիկի խանութների ցանցի սեփականատէր է՝ «Սալամանդր», «Ասե« «Բանգլադեշ» եւ եւս մի մեծ խանութ Քանաքեռ-Զէյթուն համայնքում: Սարգսեանը համարւում է իշխանութիւնների առաջին մահակը: Իր թիկնապահների միջոցով կազմակերպել է կոպիտ յարձակումներ ընդդիմադիր լիդերների եւ այլախոհների վրայ: Ռուսական լրատուամիջոցն առանձնացնում է 2004-ին իրաւապաշտպան Միքայէլ Դանիէլեանին դաժան ծեծի ենթարկելու դէպքը եւ երկրի նախագահի ազգային անվտանգութեան գծով նախկին խորհրդական Աշոտ Մանուչարեանի դէմ մահափորձը: «Որոշ տուեալներով, որոնք հրապարակուել են նաեւ մամուլում, դիմել է վարձու մարդասպանների՝ Քոչարեան-Սարգսեան զոյգի համար կրիմինալ եւ բիզնես-աշխարհում անցանկալի անձանց վերացնելու համար: 2008-ի աշնանը նրա հրահանգով «Օդնոկլասնիկի» սրճարանում սպանուեց 2 երեխաների հայր, 35-ամեայ Անդրանիկ Բաբայեանը: Լեւոն Սարգսեանի կերպարը դարձաւ այնքան զազրելի, որ վերջին շրջանում ,ընդհատակեայ գործողութիւնների վարպետից «սկսեցին հետ քաշուել նախագահը եւ նրա շրջապատը»,- նշում է «The Moscow post»-ը:

## Ռուբէն Հայրապետեան



Ռուսական լրատուամիջոցը նշում է, որ ՀՖՖ նախագահ, ԱԺ պատգամաւոր Ռուբէն Հայրապետ-

Շար.ը էջ 17

ՆԱԽԱՃԱՇ

Կազմակերպութեամբ՝

ՄԱՍԻՍ
Շաբաթաթերթի

Օժանդակ Յանձնախումբի

Կիրակի, Ապրիլ 18, 2010
առաւօտեան ժամը 10:00-էն սկսեալ
Հ.Մ.Մ.-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ
1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104

Մուտքի Նուէր՝
Ֆուլ $10.00
Մամունիէ $5.00

ՏՈՄՍԵՐՈՒ
ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ՝
(626) 797-7680




ArmenienInfo.net
News. Informationen. Kommentare.

ՀԵՐՈՍԱՄԱՐՏ

# ՆՇՈՒԵՑԱՒ ԱՅՆԹԱՊԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 90-ԱՄԵԱԿԸ
## ՓՐՈՖ. ՎԱՀԱԳՆ ՏԱՏՐԵԱՆ - «ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹԻՒՆԸ՝ ԿԸ ԽՐԱԽՈՒՍԷ ՈՃՐԱԳՈՐԾԻՆ, ՈՐ ԱՒԵԼԻՆ ԳՈՐԾԷ ԱՊԱԳԱՅԻՆ»

*Հայ ժողովուրդի դարաւոր պատմութեան մէջ բազմաթիւ հերոսամարտեր եւ սխրագործութիւններ արձանագրուած են: Այդպիսիներէն էր Այնթապի ազատատենչ հայութեան հերոսամարտը, որուն 90-ամեակին առթիւ պատշաճ յուշահանդէս մը տեղի ունեցաւ 11 Ապրիլ, Կիրակի կէսօրէ ետք ժամը 2-ին, Հոլիվուտի Տաղլեան Մշակութային Կեդրոնի սրահին մէջ:*

*Բազմահարիւր հասարակութեան մէջ կը նշմարուէին մեծ թիւով երէց եւ միջին սերունդի այնթապցիներ, տարբեր յարանուանութեանց, միութիւններու, քաղաքական կազմակերպութիւններու, ինչպէս նաեւ մամուլի եւ մտաւորականութեան ներկայացուցիչներ:*

*Ձեռնարկի կազմակերպիչ՝ Այնթապցիներու Մշակութային Միութեան անունով՝ Հայերէն եւ Անգլերէն լեզուներով հանդէս եկան Թագուհի Արզումանեան եւ Միութեան ատենապետ Աւետիս Տէմիրճեան ոգեկոչելով ազատատենչ հայ ժողովուրդի մարտական ոգին, որոնք իրենց տեղն ունին մեր ազատագրական պատմութեան մէջ:*

*Ամերիկեան եւ հայկական մաղթերգներու ունկնդրութենէն ետք, բացման աղօթքը կատարեց Հոգշ. Տ. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան: Ան միեւնոյն ժամանակ կարդաց Կիլիկիոյ Կաթողկոսութեա ներկայացուցիչ Գերշ. Տ. Մուշեղ Արք.ի պատգամը:*

*Օրուան հանդիսավարը՝ Վաչէ Սէմէրճեան իր բացման խօսքին մէջ նշեց որ այսօրուան միջոցառումը Կիլիկիոյ մէջ իրարու յաջորդող ինքնապաշտպանութեան հերոսամարտերէն մէկուն՝ 90րդ յաղթական տարեդարձն է: Ան ըսաւ թէ Այնթապի հերոսամարտը օրինակ պէտք է ծառայէ ամբողջ հայութեան խորապէս ըմբռնելու, որ յաղթանակի հասնելու համար չեն բաւեր միայն ռազմական հմտութիւն, այլ անհրաժեշտ է խնամեալ եւ ամբողջական ծրագիր, շրջահայեաց եւ իրագործելի դիւանագիտութիւն, միասնական ոգի եւ գիտակցուած կարգապահութիւն: Այն բոլոր առաքինութիւնները՝ որոնք Այնթապի հերոսամարտը կերտեցին 90 տարիներ առաջ:*

*Կիլիկիոյ եւ մասնաւորաբար Այնթապի վերաբերեալ վաւերագրական սահիկներ ցուցադրեց Սարգիս Պալմանուկեան, իւրաքանչիւրին տալով տեղին բացատրութիւններ:*

*Օրուան գլխաւոր բանախօսն էր ծանօթ ցեղասպանագէտ, բազմաթիւ գիրքերու եւ ուսումնասիրութեանց հեղինակ՝ Փրոֆ. Վահագն Տատրեան: Ան նախ զարմանք յայտնեց թէ յաճախ կը յիշուին չորս շրջաններու հերոսամարտերը՝ Մուսա Տաղի, Ուրֆայի, Շապին Գարահիսարի եւ Վանի: Այնթապի հերոսամարտն ալ յատուկ նշանակութիւն ունի արդիական հայոց պատմութեան մէջ:*

*Յարգելի բանախօսը բարձր գնահատեց Այնթապի հայութեան միասնական պայքարը, որուն իրենց մասնակցութիւնը բերին հայ կղերականը, կուսակցութիւնները, երիտասարդներն ու պատանիները: Առաջին շրջանին՝ անոնք ֆրանսացիներու միջնորդութեամբ, հարկադրեցին Թուրքին որոշ զինադադար մը կնքել: Սակայն, Թուրքերը՝ ոտնակոխեցին զինադադարի պայմանները: Այս երեւոյթին դիմաց մեր երեք կուսակցութիւնները կեդրոնական մարմին մը կազմեցին, որուն հետեւանքով հայկական միասնականութիւնը սկաւ հրաշքներ գործել: Անոնք սկսան զէնքեր եւ զինարաններ ստեղծել: Նախնական միջոցներով օրական 1500 փամփուշտ կը պատրաստէին: Նոյնիսկ սկսան պատրաստել «վրէժ» անունով թնդանօթներ: Այս քաջագործութիւններուն համար կ'արժէ Այնթապի հերոսամարտն ալ աւելցնել միւս չորս գոյամարտերուն վրայ:*


*Այնթապի Ս. Աստուածածին եկեղեցին*

*Այնուհետեւ փրոֆ. Վահագն Տատրեան խօսելով Հայոց Ցեղասպանութեան այժմէական հարցին՝ նշեց որ շատ կարեւոր է նաեւ անդրադառնալ մեծ ոճիրի նախընթացներուն: Այսինքն՝ 1894ի, 1896ի եւ Ատանայի 1909ի ջարդերուն: Ասոնք չենք կրնար ցեղասպանութիւն կոչուիլ, քանի որ միայն 2-3 օր տեւած էին եւ քաղաքներու մէջ պատահած էին: Այս ջարդերուն հեղինակները համիտեան իշխանութիւններուն կողմէ անպատժելի մնացին եւ առիթ տուին իթթիհատականներուն որ սանձարձակ գործեն յետագային: Արդարեւ, անպատժելիութիւնը կը խրախուսէ ոճրագործին որ աւելին գործէ ապագային:*

*Ըստ փրոֆ. Վ. Տատրեանի*

*Շար.ը էջ 17*

ԳԻՆԵՁՕՆ




ՏՕՔԹ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՀՄԱՐԱՆԵԱՆԻ
**«TURKEY HAS RECOGNIZED THE ARMENIAN GENOCIDE»**
գիրքի հրատարակութեան առթիւ

Կազմակերպութեամբ՝
**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ**

Գիրքը կը ներկայացնէ՝ **ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ**
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ
Կը մասնակցին նաեւ՝ **ՅՈՎՍԵՓԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ**

**Չորեքշաբթի, 21 Ապրիլ 2010**
երեկոյեան ժամը 8:00-ին
Հ.Մ.Մ.-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ
1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104

ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

## ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

# ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԱՒԱՆԴՄԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԱՇԽԱՏԱՆԻՍՏ

*ԼԻԶԱ ՃԻԿԷՐԵԱՆ-ՄԱՆՈՅԵԱՆ*

«Պապայեան» մանկավարժական հիմնարկի հովանաւորութեամբ եւ կազմակերպութեամբ, Շաբաթ, Մարտ 20, 2010ին, ՀԲԸՄի Վաչէ եւ Թամար Մանուկեան կեդրոնի «Պօյաճեան» սրահէն ներս տեղի ունեցաւ հայերէն դասաւանդող ուսուցիչ-ուսուցչուհիներու յատուկ աշխատանիստ մը:

*- Ձեր երկիրը ընտրեցի երազանքս իրականացնելու համար. քանի որ երաժշտութեան հարուստ դպրոց ունէք, որը մեծ առաջընթաց է ապրել, ուզում էի կոմպոզիտոր դառնալ, իսկ Հայաստանի օդի մէջ անգամ երաժշտութիւն կայ... Ինձ շատ օգնեցին իմ դասախօսները, որոնցից է յարգարժան Մարտուն Իսրայէլեանը, նրանց շնորհիւ ոչ միայն ծանօթացայ դասական, եւրոպական երաժշտութեան հետ, այլեւ աւելի շատ ստեղծագործել, դուրս բերել իմ հոգու մէջ ծնուող երաժշտութիւնը, որի արմատները խրուած են պարսկական հնագոյն երաժշտութեան մէջ: Ես սովորեցի ուսումնասիրել եւ մատուցել մեր պարսկական ֆոլկ երաժշտութիւնը դասական, ժամանակակից մօտեցումներով: Սիմֆոնիա դեռ չեմ գրել, բայց ունեմ ստեղծագործութիւններ, որոնք Հայաստանում կատարուել են: 2007թ. մի լարային կուարտետ գրեցի պարսիկ յայտնի բանաստեղծ Ահմադ Շամլուի 3 ստեղծագործութիւնների հիման վրայ, երգչախմբի համար, որը 2008 թ. կատարուեց պարոն Մլքէեանի երգչախմբի կողմից Երեւանի Կամերային երաժշտութեան տանը, որտեղ Հայաստանի Մշակոյթի Նախարարի կողմից արժանացայ դիպլոմի: Արարողութեանը ներկայ էր նաեւ Հայաստանի կոմպոզիտորների միութեան նախագահ Ռոբերտ Ամիրխանեանը: Երկրորդ ալտիկոն ցերտը կատարուեց Մերուժան Սիմոնեանի խմբի կողմից 2009թ. դարձեալ Կամերային երաժշտութեան տանը: Ինձ համար յայտնութիւն էր Կոմիտասի երաժշտութիւնը, երբ լսում եմ, ինձ թւում է նա ապրել է Իրանում...*

- Նա մեր երաժշտութեան հայրն է, ում շնորհիւ վերծանուեցին հայկական հնագոյն երաժշտութեան այբուբենը՝ խազերը, նա մաքրամաքուր ակունքն է հայ երաժշտութեան... Ի՞նչն է այդքան հոգեհարազատ Կոմիտաս վարդապետի ստեղծագործութիւնների մէջ Ձեզ համար:

*- Երաժշտութեան մէջ բաւականին նմանութիւններ ունենք, ինչպէս որ լեզուի մէջ ընդհանրութիւններ կարող ենք տեսնել, զգացմունքի ընկալման եւ վերարտայայտման նոյնութիւնն է երեւի... Մեր երաժշտական գամմաները շատ նման են, ժողովրդական, աշուղական երաժշտութեան մէջ, իսկ Իրանում հայ աշուղները բաւականին շատ են եղել եւ տարածել են իրենց արուեստը: Մեր պոեզիայի ազդեցութիւնից ազդուել են ձեր յայտնի պոետները՝ Իսահակեանը, Թումանեանը, Սեւակը: Ինձ համար շատ կարեւոր է, որ ես սովորում եմ հայ երաժշտութեան դպրոցում: Պարսկական երաժշտութեան մէջ ես պարզ տեսնում եմ Կոմիտասին, այս զգացողութիւնը իմ մէջ աւելացրեց սէրը Պարսկաստանի եւ Հայաստանի հանդէպ, այնքան, որ այդ երկու երկիրը ինձ համար սուրբ են... Ես անսահման շնորհակալ եմ Հայաստանին, որ սովորեցրեց ինձ Պարսկաստանի մշակոյթը:*

- Ասել կ'ուզէք, հեռաւորութիւնն ու յաւելեալ կրթութիւնը օգնեցի՞ն Ձեզ...

*- Երբ Պարսկաստանում էի, ես չէի լսում եւ չէի ընկալում պարսկական ֆոլկ երաժշտութիւնը, եւրոպական դասականից բացի, ինձ համար ուրիշ սահման չկար... Հայաստանում տեսայ ֆոլկի մշակուած ձեւը, հասկացայ ու գնահատեցի: Համոզուեցի, որ մերը անմշակ գոհար է, որ հողի տակ է մնացել հարիւրամեակներ շարունակ եւ պէտք է մշակելով ու յղկելով այդ գոհարը դուրս բերենք: Կոմիտասին լսելով անգամ այդ յղկման ձեւը կարելի է սովորել... Իսկ պարսկական երաժշտութիւնը իսլամից 700 տարի առաջ գոյութիւն ունէր, ունեցել ենք մեր մելիզմները, գամմաները, լադերը, որոնք այդպէս էլ անմշակ մնացել են մինչ օրս... Եթէ այսօրուանից սկսենք, 100 տարուայ գործ ունենք անելու, այնքան, որ բերքը շատ է...*

- Այն ինչը արժէք է եւ թողնուած է բարձի թողի վիճակում, շատ հեշտ ու հանգիստ կարող է դառնալ մէկ ուրիշի սեփականութիւնը, հայ մշակոյթը նման կորուստներ ունեցել է... Իսկ հայկական եւ իրանական երաժշտութեան ճանաչողութեան առումով ի՞նչ վիճակ է տիրում մեր երկու բարեկամ ժողովուրդների մօտ:

*- Իմ գործունէութեան ընթացքում հնարաւորինս աշխատել եմ պարսկական երաժշտութիւնը ներկայացնել Հայաստանում, կազմակերպել եմ իրանցի երաժշտախմբերի ելոյթներ: Սա պէտք է անընդհատ լինի, հայերն էլ Իրանում պէտք է հանդէս գան իրենց երաժշտութեան ներկայացմամբ, Իրանի երիտասարդները պիտի գան Հայաստան սովորելու, ելոյթներ ունենան: Հայ երաժշտագէտները շատ քիչ գիտեն պարսկական երաժշտութեան մասին, որքան եւրոպական, ռուսական երաժշտական դպրոցի մասին: Նրանք դա ընկալում են որպէս իսլամական, մահմեդական երաժշտութիւն, քան պարսկական, բայց Իրանի երաժշտութիւնն աւելի հին է եւ խոր, իհարկէ իսլամի ազդեցութիւնն էլ ունի: Մնում է հիմնաւորապէս անդրադառնալ, ներկայացնել, ծանօթացնել ու ճանաչելի դարձ նել:*

- Ի՞նչ է անհրաժեշտ մէկ քայլ առաջ գնալու փոխադարձ շփումների մէջ: Միմեանց աւելի լաւ ճանաչելու կարճ եւ յստակ ճանապարհը ո՞րն է ըստ ձեզ:

*Արաշ- Կարծում եմ, նոր եւ երկարատեւ ծրագիր պէտք է մշակուի երկու երկրների միջեւ փոխադարձ շփումների: Ներկայացնենք միմեանց մեր մշակոյթը. սա է միակ եւ կարճ ճանապարհը, որտեղ իր մեծ դերը ունեն մեր երկու ժողովուրդների կրօնը: Եթէ կարողանանք արժանի կերպով Հայաստանում ներկայացնենք եւ տարածենք մեր լեզուն, մեր պոեզիան, իսկ Իրանում պետական համալսարանում պէտք է հայոց պատմութեան ու մշակոյթի դասընթաց դնել, ժողովրդին ներկայացնել հայերի հարուստ արժէքները: Իրար կողքի եւ նոյնիսկ իրար մէջ ենք ապրել դարեր շարունակ, բայց այդքան հարուստ մշակոյթ եւ պատմութիւն ունենալով, ինֆորմացիայի պակասի պատճառով իրարից շատ անտեղեակ ենք:*

*Շար.ը էջ 17*



## ԳՐԱԿԱՆ

# ԽՈՀԵՐ ՈՒ ՊԱՀԵՐ՝ Վ. ԹԷՔԷԵԱՆԻ ՇԻՋՄԱՆ 65-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

*ԱՐԱՄ ՍԵՓԵԹՃԵԱՆ*

**ՋՈՒԱՐԹՆՈՑ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ**

«Այս տաճարին մէջ, ո՛վ Տէր,
աղօթեցին անոնք որ
իրենց ցաւի մուխին խառն՝
հրճուանքի բո՛ց մ'ունէին...»:

**Վ. ԹԷՔԷԵԱՆ**

*«ՁԱՅՆ ԵՒ ԼՈՅՍ»ը արդի ժամանակներու գեղարուեստական իր բարձրագոյն մակարդակով մեզի կը պարգեւէ պահեր ու խոհեր: Հոգեկան այդ վայելքն է որ կը յամենայ ինձմէ ներս, անոր կրկնօրինակին մէջ գտնելով շարունակութիւնը գեղարուեստական այդ պահերուն: Յաճախ, այդ մտածումն իսկ, որմէ երբ կ'այցուիմ ենթագիտակցաբար, այդ «շնորհ»ը կ'ընդունիմ մեծագոյն շնորհակալութեամբ:*

*Այն ինչ որ Եգիպտոսի «բուրգեր»ը պատմեցին ինծի իրենց Անցեալի հրաշալիքները, ՁԱՅՆի եւ ԼՈՅՍի վերացնող գեղեցկութեամբ, նոյնը՝ ակամայ եւ անզգալաբար, իբրեւ անանուն յոյզ եւ ապրում, խուժեցին ինձմէ ներս երբ նորաւեր հոգիովս կանգնած Ջուարթնոցի Տաճարին աւերակներու մէջ, կ'երեւակայէի մեր Բանաստեղծը, որ 1911ին, իբրեւ ուխտաւոր այցի էր եկած այստեղ, եւ աւերակ տաճարին մէջ մտովի՝ երկներ՝ տողերը իր «Ջուարթնոց»ին: ... «Այս տաճարին մէջ, ո՛վ Տէր...»: Ես ալ ահաւասիկ կը կանգնիմ լուռ եւ ամփոփ, ու կը մտածեմ անոր հոգիին մասին՝ որ... «դողաց վասն մեր եւ բազմաց»:*

*Ջուարթնոցի աւերակներու »Համալիր«ին մէջ կը գտնեմ ես զիս: Անոր համահաւասա՞րը՝ ժայռանիստ Գեղարդն է, որ... պարզ ու խորունկ, մութ ու լոյս քարայր մըն է ընդարձակ, եւ որ եղեր էր ներշնչարանը Բանաստեղծին, երբ իր այցէն տասնեակ տարիներ ետք կը յօրինէր ան՝ տողերը իր «Եկեղեցին Հայկական» անկրկնելիօրէն նկարչագեղ քերթուածին:*

*Կը շարունակեմ մնալ Ջուարթնոցի աւերակներու շրջագիծէն ներս: Իւրաքանչիւր քար ու քանդակին մէջ անոր, կը զգամ ջերմութիւնը մեր պապերուն մաքուր քրտինքի հետ, նաեւ ուղխը բոսոր արեան, շաղախած իր հիմքերը՝ բարձր բերդին մեր հաւատքին: Ու կը մտածեմ հրաշալի այն պահին մասին, երբ քերթուածը կը յօրինուէր բանաստեղծին միտքին մէջ, ու կը հաւատամ ի՛մ իսկ ենթադրութեանս, որ Թէքէեանի «Եկեղեցին Հայկական»ը սկսեր էր գրուիլ Գեղարդայ վանքին ու Ջուարթնոցի տաճարին աւերակներուն ուղղուած իր իմաստուն հայեացքին ու սեւեռումին ընթացքին... իր «Մէկ-Հատիկ»ին անվերադարձ կորուստէն առաջ... երբ կ'աղօթէր ծնրադիր ու թախծադէմ՝ այդ կիսափուլ տաճարէն ներս:*

*Ջուարթնոցի խորհուրդը, անիմանալի՛ ապրում մը՝ որ լեզո՛ւ տուաւ դարերու մունջ պատմութեան: Վերականգնեց Եկեղեցին Հայկականը իր փլատակներէն: Կաթողիկէն ստացաւ երկնասլաց տեսք, որուն պատերը ցնցեցին վերստին բանաստեղծին ճենճերող սիրտը,- ի տես մեր ժողովուրդին ապրած «Կէս Գիշեր»ին, եւ ի լուր կենդանի նահատակութեա՛նը մեր Կոմիտաս-ադամա՛նդ երգին,- «Մեզ դժոխք, դժոխք ղրկէ անգամ մ'ալ»...:*

*Ես, այս քերթուածէն քանի մը տող արտասանեցի ծնրադիր՝ Ջուարթնոց տաճարին աւերակներուն մէջ:*

*Սակայն, իրօ՞ք Թէքէեանին գրիչն էր որ կը ստորագրէր զայն երբ իր հոգեկան խաղա՜ղ մէկ պահուն, ան դարերուն կը յանձնէր նկարչագեղ այն «Վարագոյրը բանուած, որուն ետեւ սկիհին մէջ կ'իջնէր ի՛նքը՝ Աստուած, որուն առջեւ գլխահակ կու գար իմ ազգս ամբողջ որպէսզի հաղորդուէր անցեալին հաց ու գինւով կենսառողջ»:*

*Պատասխանը աւարտա՞ծ է: Այն ինչ որ արտագրեցի, ես ալ աչքս գոց կը տեսնէի ծննդավայրը հոգիիս, եւ պահ մը կ'երեւակայէի որ Ջուարթնոցի համալիրը ըլլար այն մնայուն թանգարանը, բաց երկինքի տակ,- ինչ որ է՛, անտարակոյս,- ուր մեծադիր ժայռի մը վրայ քերթէին, փորագրէին կամ քանդակէին այս քերթուածին բոլոր տողերը, ամբողջ եւ առանց մեկնաբանութեան: Տարբեր հարց, եթէ արուեստագէտ այլ հոգի մը, եղբայր ու հաւասարապատիւ, կարենար որմնանկարով մը խորհրդանշել հմայքը այս բանաստեղծութեան: Վստահ եմ, մեզի պէս ան ալ պիտի մօտենար գլխահակ՝ այդ սկիհէն հաղորդուելու մեր Անցեալին հետ, եւ ան, մտածելով նաեւ մեծ ծովանկարիչին «Իններորդ Ալիք»ին մասին, բանաստեղծին ալեկոծ ծովուն դիմաց գտնուող խաղաղ նաւահանգիստն է որ պիտի նկարէր «Ցուրտ գիշերին՝ հուր եւ բոց», ու քիչ մը հեռուն՝ պիտի երեւէին Շարականի գետին մօտ ծաղկող շուշանները՝ ինչպէս՝ մեր հարսնացուները ապագայ:*

*Ու հարց կու տամ մտովի բոլոր այն քար ու քանդակներուն, ցո՛յց տալ մեզի դէպի երկինք բարձրացող գաղտնի ճամբաները: Թող մեր մտածումները սուրան աջ եւ ահեակ, առնեն ձեւ ու մարմին, հագնին զրահանդերձ փայլուն, խաչերը՝ ըլլան դաշո՛յն, իսկ զանգակները՝ բոմբիւն իբրեւ երգը յաղթութեան, ու դառնայ լսելի մեր Անլռելի Զանգակատունէն:*

*Ջուարթնոցի աւերակ տաճարին համալիրը եղաւ ուխտատեղի մտածումներուս: Քար ու քարայր վերածուեցան «բարձր բերդին հաւատքի» ու «վարագոյրը բանուած»՝ եղաւ հանդիսարանը մեր ցեղային դարաւոր երազներուն: Քար ու քարայր, ժայռաբեկորներու վրայ եղան քերթուածներ՝ քանդակուած իբրեւ պատգա՛մ մեր սերունդներուն ապագայ:*

*Ձայն եւ լոյս վերամիացած, քերթուածին կու տային յաւերժութի՛ւնը խորքին, գեղեցի՛կ ու վսեմ:*

*Տարիներու խորքէն, կը լսեմ բանաստեղծին Լո՜ւռ Ձայնը, բայց՝ խօսուն ու կենդանի:*

*Ու Ջուարթնոց տաճարը կը վերածուի կրկին բանաստեղծութեան, կ'ըլլայ Եկեղեցին Հայկական ու կը մնայ իբրեւ փառաւոր ու դարաւոր՝ ԲԱՐՁՐ ԲԵՐԴԸ մեր ՀԱՒԱՏՔԻՆ:*

*Իսկ մեր շո՞ւրջը. Յարութեան Շունչն է Ահա...:*

# ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ(1843 - 1891) ՀԱՅ ԵՐԳԻԾԱԲԱՆ, ԳՐՈՂ

*Յակոբ Պարոնեան ծնած է Էտիրնէ 1843ին, աղքատ ծնողքէ: Նախնական կրթութիւնը ստացած է տեղւոյն Արշակունեաց վարժարանին մէջ: 1857ին, մէկ տարի կը յաճախէ քաղաքի յունական վարժարանը: Ապրուստ հոգալու համար դեղագործի մը քով կ'աշխատի երկու տարի: Ապա կը պաշտօնավարէ ծխախոտի ընկերութեան մը մէջ իբրեւ հաշուապահ: Ինքնաշխատութեամբ եւ անյագ ընթերցումով ձեռք բերած է լայն զարգացում եւ գրական հմտութիւն:*

*1863ին կ'անցնի Պոլիս եւ կը դասաւանդէ Սկիւտարի ճեմարանը, աշակերտ ունենալով Պետրոս Դուրեանը: 1871ին կը ստանձնէ «Եփրատ»ի խմբագրապետի պաշտօնը, բայց շուտով կ'անցնի Յարութիւն Սվաճեանի հիմնած «Մեղու» թերթի խմբագրութեան, զայն վերածելով յայտնի երգիծաթերթի: Երբ 1874ին «Մեղու»էն կը դադրի, Սվաճեան արտօնատէրի իրաւունքը կը փոխանցէ Պարոնեանին, զոր զայն կը վերահրատարակէ որպէս՝ «Թատրոն»: Իբր արտօնատէր՝ անկաշկանդ, Պարոնեան թուիչք կու տայ իր խարազանող բայց դաստիարակիչ սրամտութեան, հեգնելով իր շրջապատի յոռի բարքերը: Տնտեսական դժուարութիւններու պատճառաւ, «Թատրոն»ը կը դադրի 1877ին: Պարոնեան կ'ամուսնանայ Սաթենիկ Էթմէքճեանի հետ 1879ին: Կ'ունենան երկու զաւակ. աղջիկ մը՝ Զապէլ, եւ մանչ մը՝ Աշոտ»:*

*1879ին կը սկսի աշխատակցիլ Մինաս Գափամաճեանի «Լոյս» թերթին, որպէս զաւեշտական բաժնի պատասխանատու: Իր գրութիւնները լայն հետաքրքրութիւն կը ստեղծեն, սակայն Գափամաճեան նիւթապէս չի վարձատրեր զինք եւ հետեւաբար Պարոնեան կը ստիպուի «Լոյս»ի իր աշխատակցութիւնը կեցնել: 1884ին «Խիկար» ամսագիրը կը սկսի, եւ հակառակ նիւթական խոչընդոտներուն ու կարճ ընդհատումներուն, զայն կը հրատարակէ մինչեւ 1888: Այս ամսագրին մէջ լոյս կը տեսնեն իր երգիծական շատ մը կարեւոր գործերը: 1888էն 1890՝ ապրուստ ապահովելու համար Ղալաթիոյ Կեդրոնական վարժարանին մէջ տոմարակալութիւն կ'ուսուցանէ: Հոն իրեն կ'աշակերտէ յայտնի լեզուաբան Հրաչեայ Աճառեան: Կը տառապի հիւծախտէ եւ կը մահանայ 1891ին, թշուառութեան մէջ ձգելով այրին ու անչափահաս զաւակները:*

*Իր ժամանակակից գրագէտ Մատթէոս Մամուրեան այսպէս կը գրէր իր մահուան առթիւ. «Մեռաւ Պարոնեան, բայց ի՞նչպէս. գրեթէ անոք, անօգնական: Քանի՞ կրթասէրք ու ազգասէրք պատասխանեցին այն հրաւէրին զոր նորա հիւանդութեան միջոցին գրեցին հայ թերթերը...: Եւ արդարեւ ի՞նչ ըրինք խեղճին, ի՞նչ ըրաւ ազգն հաւաքաբար իւր արի զաւկին համար. Թաղման հանդէսը կատարեց եւ որոշեց միայն նպաստ հաւաքել նորա որբոց համար... չգտնուեցաւ պաշտօնական մարմին մը, անհատ մը, որ պսակ դնէր անմահ Պարոնեանի վրայ, թէեւ նորա գործերն են իւր անդարամ պսակներնե:*

*Պարոնեան ունեցաւ ազգային յուղարկաւորութիւն մը, հոծ բազմութեան մը մասնակցութեամբ՝ ուսուցիչներու, մտաւորականներու, գործաւոր դասակարգի եւ ինչպէս նաեւ կարգ մը ամիրաներու ու ջոջերու ներկայութեամբ: Դամբանականը կարդացած է Նարպէյ Արքեպիսկոպոսը, որ «Ազգային Ջոջեր»ուն մէջ Պարոնեանի սուր երգիծանգին թիրախ դարձած էր: Մարմինը կ'ամփոփուի Օրթագիւղի գերեզմանատունը, «մեռելոց այդ հանդարտիկ բնակարանին մէկ անկիւնը, տխուր ու մենաւոր»:*

*Տապանաքար մը չկանգնեցաւ անոր շիրիմին վրայ եւ շուտով մոռցուեցաւ անոր ճշգրիտ վայրը: 1976ին, մտաւորական եւ գրող Վահրամ Մավեան կոչ մը ստորագրեց հայ մամուլին մէջ, դիտել տալով թէ՝ ,...ինչպէս 85 տարի անցած է վրայէն եւ սերունդներ ամբողջ - թաղական, հոգեւորական, մտաւորական, թատերասէր - եկած ու անցած են առանց հողակոյտին վրայ տապանաքար մը դնելու մասին մտածելու՝ անըմբռնելի է պարզապէս: Հիմա արդէն անտէր կորսուած է հողակոյտն ալ:»*

*Գրական գործունէութիւնը*

*Պարոնեան եղաւ բեղուն ստեղծագործ մը: Տասնեակ հազարէ աւելի էջեր արտադրեց կարճ ժամանակամիջոցի մը մէջ, յատկապէս 1871-1888 տարիներուն: Իր բոլոր գրութիւնները մամուլի համար գրուեցան եւ լոյս տեսան լրագիրներու մէջ: Թէեւ իր գործերէն ոմանք իր իսկ կողմէ հրատարակուեցան առանձին հատորով, Պարոնեանի երկերու մեծամասնութիւնը գիրքերու մէջ ամփոփուեցան միայն իր մահէն ետք: Իր գործերը կը կազմեն՝ «Մեծապատիւ Մուրացկանները» վէպը, «Քաղաքավարութեան Վնասները» պատմուածքներու շարքը, «Պտոյտ մը Պոլսոյ Թաղերուն Մէջ» եւ «Ազգային Ջոջեր» նկարագրական էջերը,«Մեղու», «Թատրոն» եւ «Խիկար» թերթերու մէջ ցրուած բազմաթիւ քրոնիկները, ինչպէս նաեւ ՝ «Ատամնաբոյժն Արեւելեան» եւ «Պաղտասար Աղբար» կատակերգութիւնները:*

*Գրական Ոճը*

*Պարոնեան ամէն բանէ առաջ իր ժամանակին ու միջավայրին մարդն է: Պոլսահայ կեանքը՝ իր զանազան երեւոյթներով կ'արտացոլայ իր էջերէն: Ան հաւասարապէս կը խարազանէ փառասէր աղաներն ու փոքրոգի թաղականները, խաբեբայ վաճառականներն ու կեղծաւոր կղերականները, վարձկան լրագրողներն ու մուրացկան բանաստեղծները, վերին խաւի եւրոպական բարքերը ընդօրինակելու մոլութիւնն ու վարի խաւի խաւարամտութիւնը: Անոր գործը կը խնդացնէ, բայց խորքը շատ տխուր է: Կը զուարճացնէ՝ առանց զուարճանալու:*

*Պարոնեանի գրականութիւնը կը ձգտի դաստիարակիչ ըլլալ եւ նպաստել ընկերութեան վատ բարքերը վերացնելու: Իր հեգնանքին նպատակը խնդացնելն ու նուրբ արուեստ մը ստեղծել չէ: Եւ որովհետեւ իր ընթերցողը պարզ ժողովուրդն էր՝ գրեթէ տգէտ եւ գեղարուեստէ շատ հեռու, իր ոճը եղաւ անկեղծ եւ իր լեզուն պարզ: Գործածելով գրաբարէ մաքրուած սահուն արեւմտահայերէն, ան ստեղծեց իրապաշտ արձակ մը՝ բնական, անզարդ, առոյգ. լի աշխոյժ բեմականութեամբ: Վարպետօրէն նկարագրեց իրաւ կերպարներ եւ իրավիճակներ, սեղմ տողերով եւ կենսունակ երկխօսութիւններով:*

*Ստեղծագործութիւնները*

*Մեծապատիւ Մուրացկանները, Քաղաքավարութեան Վնասները, Ազգային Ջոջեր, Պտոյտ մը Պոլսոյ Թաղերուն Մէջ, Ծիծաղ, Կամիթներ, Իմ Ձեռատետրը կամ Հոսհոսի Ձեռատետրը:*

*Թատերական գործեր*

*Երկու Տէրոջ Մէկ Ծառայ, Ատամնաբոյժն Արեւելեան, Պաղտասար Աղբար, Շողոքորթը:*

# Հ.Բ.Ը.Մ. ՎԱՉԷ ԵՒ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԵՐԿ. ՎԱՐԺԱՐԱՆ



Շարունակուած էջ 1-էն

ներուն համբաւը ծանօթ էր հայրենիքի եւ սփիւռքով մէկ համայն հայութեան:

Մեծարանքի հանդիսութեան ներկայ էր գնահատութեան արժանի, այլապէս տպաւորիչ ժողովրդական բազմաբեւեռ լայն հասարակութիւն մը, իր պատկառազդու հոգեւոր չքախումբով, հայրենի աւագ հիւպատոսութեամբ, ազգային կառոյցներու կրթական, մշակութային եւ մամլոյ ներկայացուցիչներով: Անոնք եկած էին իրենց յարգանքի անմնացորդ տուրքը վճարելու մեր ազգային կրթական կեանքին սատար հանդիսացող բարերար ամոլի մը, որ իրենց ժողովուրդի գոյութեան պահպանման եւ լինելիութեան բաղդորոշ գրաւը դրած էին մեր նոր սերունդներու առողջ հայեցի կրթութեան, կատարելապէս մեր մեսրոպեան լեզուին տիրացման եւ մեր նորօրեայ կեանքի մէջ յաջողութիւններ արձանագրելու եւ բարձրագոյն դիրքերու հասնելու նախապայման՝ հետեւողական, անվհատ ու ժիր աշխատանքին վրայ:

Վարժարանի փոխտնօրէնուհի Տոքթ. Թալին Քարկոտորեանի ձեռնհաս, այլ հաղորդական ատենավարութեան ներքեւ իր բարի գալուստի եւ իրենց գլխաւորած ՀԲԸՄ-ի Վաչէ եւ Թամար Մանուկեան երկրորդական վարժարանի ունեցած փայլուն կարելիութիւնները ի գործ դնելու յանձնառու բացման խօսքով՝ թէ իրենց վարժարանը պիտի դառնայ Գալիֆորնիոյ նահանգի օրինակելի լաւագոյն կրթական հաստատութիւններէն մին, ընթացք առաւ մեծարանքի հանդիսութիւնը:

Օրուան պատգամախօսները հանդիսացան՝ ՀԲԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ Սինան Սինանեան, «Երուանդ Պապայեան Ազգանուիրում Հիմնարկութեան» Վարիչ Տնօրէնուհի Դոկտ. Սիլվա Գարայեան, Հ.Բ.Ը.Մ.ի վաստակաշատ առաջնորդ դէմքերէն Գառնիկ Գարայեան, Բարերարուհի Թամար Մանուկեան եւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեան:

Պրն. Սինանեան, դպրոցին վերաբերեալ դրուատալից, այլ ոգեւորիչ նշումներէն ետք, շեշտը դրաւ մեծարեալ բարերարներուն, Տէր եւ Տիկ.Վաչէ եւ Թամար Մանուկեաններուն բարեգործութիւններուն, նաեւ՝ անոնց զաւակներուն հայեցի դաստիարակութիւն ջամբող օրինակելի ծնողներ ըլլալու պատուաբեր հանգամանքին վրայ:

Դոկտ. Գարայեան, դիտել տալէ ետք բարերար ամոլներու ծնողներուն, իրենց օրինակելի զաւակներուն եւ թոռներուն ջամբած հայրենասիրական, ազգասիրական եւ հայեցի դաստիարակութեան վրայ՝ խօսքը մասնաւորելով օրուան մեծարեալ բարերարներուն, ըսաւ. ««մենք հպարտ ենք ձեզմով որպէս տիպար եւ օրինակելի հայ աւանդական ընտանիք, հաւատաւոր եւ հպարտ հայորդիներ եւ վերջապէս, գիտակից եւ ազգանուէր բարերարներ: Տարակոյս չկար, որ ինչպէս Վահան Թէքէեան պիտի հաստատէր. «հացի ջուրի նման մենք պէտք ունինք հպարտութեան»: Իր խօսքի աւարտին, յարգելի գեկուցաբերը, բեմ հրաւիրեց բարերար ամոլի զաւակները՝ Գառնիկը, Սիրանն ու Արամը, որոնք յայտարարեցին, թէ իրենց ծնողները աշխարհի լաւագոյն ծնողներն են: Երեք երիտասարդները արժանացան ներկաներուն բուռն ծափահարութիւններուն:

Իր կարգին, բարերարուհի Թամարի հայրը՝ Պրն. Գառնիկ Գարայեան, անդրադարձաւ իրենց զաւակներուն, ի մասնաւորի Թամարի վաղ մանկա-պատանեկան շրջանին ունեցած ուսումնատենչութեան, ուսումնառութեան, ջանասիրութեան, ուսումնական կեանքէն ներս արձանագրած յաջողութիւններուն, անձնական ձգտումներուն եւ հիւսած երազներուն վրայ: Պրն. Գարայեան հաճելի դրուագներ պատմեց Թամարի վաղ ուսումնական կեանքէն, թէ ինչպէս, օրին մէկը, ան պիտի դառնար իշխանուհի: Իրենց ծանօթներէն Տիկ. Նուէր Պէյլէրեան այդ մէկը կարդացած էր Թամարի մօր, Տիկ. Անժէլի սուրճի գաւաթին մէջ: Թամար իրականացուցած էր իր երազը: Իշխանուհի դարձած էր, իր կեանքը կապելով Վաչէին, 1983-ին: Վաչէ եւ Թամար, երկուքով,հարստացուցած էին իրենց ծնողները չորս թոռներով:

Վարժարանի ուսանողներուն կողմէ ներկայացուած յատուկ, յաջող եւ ծափահարելի գեղարուեստական յայտագիր մը գործադրուեցաւ, որ ծաղկեցուց խօսքի բաժինը:

Օր. Արմինէ Մովսէսեանի առաջնորդութեամբ՝ պարախմբային ելոյթ մը գոհունակութեամբ լեցուց սրտերը, իսկ, խմբավարութեամբ Պրն. Քրիսթոֆըր Նակլի՝ ուսանողական նուագախումբը հրամցուց երկու նուագ,«Կլատիաթորներու փառատօնը» եւ «Քարտիֆի բերդը»:

Երգչախմբային կատարողութեամբ՝ յաջողապէս երգուեցաւ «Հայ երգը» եւ «Երգ Բագոսին», Նորայր Տատուրեանի խմբավարութեան տակ:

Հաճելի անակնկալ մըն էր գեղարուեստական յայտագրի աւարտին, մէկ արարի սահմանափակ տարածքին յաջողապէս ամփոփուած Յակոբ Պարոնեանի «Պաղտասար Աղբար» երգիծա-թատերախաղի բեմադրութիւնը, զոր պատրաստած էր Օրդ. Լորա Գույումճեան: Ներկաները ունեցան մէկ արարի նեղ սահմաններուն մէջ հնարամտօրէն ամփոփուած ամբողջ թատերախաղ մը դիտած ըլլալու գոհունակութիւնը:

Գեղարուեստական յայտագրի աւարտէն ետք, բեմ հրաւիրուեցաւ բարերարուհի Թամար Մանուկեան, ըսելու իր սրտի խօսքը, որ բացայայտումը հանդիսացաւ իր ներաշխարհի համեստ, անմիջական, ծառայասէր, գերազանցապէս ազգասէր բարերարի մը վարքագծային մաքրամաքուր շերտերուն: Ան, Վաչէին, զաւակներուն եւ իր կողմէ շնորհակալութիւն յայտնեց բոլորին, իրենց նուիրուած ջերմ ընդունելութեան գեղեցիկ առիթով, որ եղած էր իրենց կեանքի ուրախ եւ յիշատակելի օրերէն մէկը: Այնուհետեւ, իբրեւ հեռանկարներ ունեցող բարերարուհի Տիկ, Թամար, բանաձեւեց «ՀԲԸՄ-ի Վաչէ եւ Թամար Մանուկեան երկրորդական վարժարան»ի ուսանողներէն՝ արդարօրէն ունեցած մարտահրաւէրային ակնկալութիւնները, որոնք պէտք էր նուիրականանային, անպայմանօրէ՛ն:

Տիկ. Մանուկեան, շեշտելով հանդերձ խիստ կարեւորութիւնը պետական ուսումնական ծրագրի իւրացումը, եւ անոր ամբողջական բաւարարումը, առաւել եւս հրամայական եւ պարտադիր համարեց հայկեան սքանչելի լեզուի տիրացումը: Բարերարուհին պիտի կորովի ազդարարեր. «Պիտի չներենք, եթէ լաւ չսորվիք մեր սքանչելի մայրենի լեզուն: Միշտ ի մտի ունեցէք մեր անմահ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեանի «Խօսք իմ Որդուն» բանաստեղծութիւնը: Բարերարուհիին շնորհակալական ջերմ խօսքերն ու մարտահրաւէրային պատգամները որոտընդոստ ծափողջիւններու արժանացան սրահէն ներս:

Իր եզրափակիչ խօսքով ելոյթ ունեցաւ Թեմիս Բարեջան Առաջնորդ՝ Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեան, որ իր ուրոյն հռետորական ոճով վեր առաւ ու գնահատեց Տէր եւ Տիկ. Վաչէ եւ Թամար Մանուկեաններու անհատական, ընտանեկան, ազգասիրական, կրթական եւ եկեղեցասիրական նուիրական բարեմասնութիւնները: Անոնց անունները, ըսաւ ան՝ հմայք, պատիւ եւ հպարտութիւն կը բերեն մեր համայնքի, ազգի եւ հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կեանքէն ներս: Ան, Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Ա. ի բառերով մաղթեց.«Հող բռնէք՝ ոսկի դառնայ, ոսկի բռնէք՝ հոգի դառնայ»:

Սրբազան Հայրը իր խօսքի աւարտին, յայտնելէ ետք թէ ներկայ տօնական օրերուն իրենց ներկայութեամբ զօտեպնդեցին իրենց անունը կրող դպրոցի խորը երախտագէտ տնօրէնութիւնը, աշակերտութիւնը եւ խնամակալութիւնը, յայտնեց իր սէրը, օրհնութիւնը եւ աղօթքը՝ ուղղուած Տէր եւ Տիկ. Վաչէ եւ Թամար Մանուկեաններըուն:

Առաջնորդ հօր եւ Եկեղեցական դասի կողմէ տեղի ունեցաւ խոստովանանք եւ տրուեցաւ հաղորդութիւն:

Մեծարանքի հանդիսութեան աւարտին մատուցուեցաւ ճաշկերոյթ ընդունելութիւն «Պոյաճեան» սրահին մէջ:

Իմաստալից, հեռանկարային, այլապէս կառուցողական բնոյթի մեծարանքի գնահատելի հանդիսութիւն մը խորքին մէջ, որ ներկայ մեր ապրիլեան պահանջատիրական օրերուն՝ կու գայ ցոյց տալու հայու գոյութեան պահպանման անմեռ կամքն ու լինելիութեան հաւատքը:

«Մասիս»ի խմբագրութիւնն ու աշխատակազմը, իրենց կարգին, կը շնորհաւորեն մեծարեալ Վաչէ եւ Թամար Մանուկեան բարերար ամոլը, մաղթելով անոնց ամենայն բարիք՝ իրենց կառուցողական նուիրական ճանապարհին:





**BLOOD DRIVE**
Sunday, April 18, 2010 10:00 a.m. - 4:00 p.m.
K & M Glendale Youth Center, 211 W. Chestnut St., Glendale, California (818) 243-3444

**MAN'S INHUMANITY TO MAN**
**Evening of Music & Poetry:** Monday, April 19, Opening Reception: 6:30 p.m. Program: 7:00 - 9:00 p.m.
**Evening of Discussion - Modern Day Slavery:** Thursday, April, 22, 7:00 - 9:00 p.m.
GLENDALE CENTRAL LIBRARY AUDITORIUM, 222 E. Harvard St., Glendale, California

**ARMENIAN GENOCIDE**
Friday, April 23, 2010
ALEX THEATRE, 216 North Brand Blvd., Glendale, California (FREE parking at Orange St. Garage)
7:00 p.m. (doors will open at 6:15p.m.)
Keynote speaker: Robert A. Papazian, Emmy Award winning producer
Performances by: Armenian Dramatic Arts Alliance, Glendale Philharmonic, Antranig Kzirian and Jivan Kasparyan during the candlelight vigil
Tickets will be available at the Alex Theatre box office on April 19.
ALL EVENTS ARE FREE
For more information, please call (818) 548-4844.

Nine Decades of Denial presented by GUSD on Wednesday, April 21, 7:00 p.m. at Glendale High School Auditorium

Request for reasonable accommodations will be made upon request.

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹԱԼԱՆՈՂՆԵՐԸ

*Շարունակուած էջ 6-էն*

*եանը՝ Նեմեց Ռուբօ, ֆութպոլի «Փիւնիկ» ակումբի դէ ֆակտօ տէրն է: Հայաստանում, ըստ «The Moscow post»-ի, լաւ են յիշում անեկդոտային պատմութիւնը, երբ Սերժ Սարգսեանի Թուրքիա այցից առաջ (երբ վերջինս գնում էր Հայաստան-Թուրքիա ֆուտպոլային խաղը դիտելու), Հայաստանի զինանշանի վրայից մէկ անհետանում, մէկ յայտնւում էր Արարատ լեռը, ինչն ուղեկցւում էր Ռուբէն Հայրապետեանի անգրագէտ ու անհեթեթ բացատրութիւններով: Հայրապետեանը հանդիսանում է Հայաստանի «ծխախոտի արքաներից» մէկը: Իր բիզնես-կարիերան սկսել է «Հայծխախոտ» արտադրական միաւորման փոխտնօրէնի պաշտօնից: Հետագայում դարձել է «Հայծխախոտ» ԲԲԸ-ի կառավարման խորհրդի նախագահ: 1999-ին գնել է հայ-կանադական «Գրանդ դոպաքօ»-ի բաժնետոմսերի մի մասը, իսկ յետոյ՝ միւս մասը: Գրոշներով սեփականաշնորհել է Վանաձորի տրիկոտաժի ֆաբրիկան, որը հիմա արտադրում է այնպիսի քանակութեամբ տրիկոտաժ, որ արտահանւում է այլ երկրներ: Ըստ ռուսական ԶԼՄ-ի, Հայրապետեանը ուրիշի ունեցուածքը խլելու մեծ սիրահար է: Մասնաւորապէս, «Բջնի» գործարանի «դեղեկտիւ ձեռքբերումից» յետոյ, նա իշխանութիւնների օգնութեամբ հետաքրքրութիւն ցուցաբերեց «Բիւրեղի» հանդէպ: Հայրապետեանին է պատկանում շինանիւթերի, մետաղեայ իրերի, ջրատաքացուցիչ սարքերի մեծածախ վաճառքով զբաղուող «Ռումավա» ԲԲԸ-ն, կտորեղէնի, տեքստիլ արդիւնաբերութեան արտադրութեամբ զբաղուող «Խարուր» ԲԲԸ-ն, հացհատիկային կուլտուրաների աճեցմամբ զբաղուող «Բամպակ» ՓԲԸ-ն, «Ավան-91» ալքոհոլային խմիչքների արտադրական կոմպլեքսը, «Անահիտ» ռեստորանները, պարերն ու սրճարանները, «Նորալուսին» հանգստեան եւ զուարճանքի կազմակերպութիւնը, «Փիւնիկ» ֆուտպոլային ակումբը: կազմակերպութիւնների մի մասը գրանցուած է Հայրապետեանի հօր՝ Ռաֆիկ Հայրապետեանի անունով, այդ թւում՝ եւ գազային վառելիքի մեծածախ վաճառքի ոլորտում նրա բիզնես-կառոյցները: Համարւում է «իշխանութեան մահակներից» մէկը: Ունի լաւ զինուած եւ բազմամարդ թիկնազօր: Միշտ ձգտում է, որ լրատուամիջոցները, նոյնիսկ ընդդիմադիր, իրեն անուանեն Սերժ Սարգսեանի ամենամերձաւոր օլիգարխը եւ փորձում է արդարացնել իր «բարձր կոչումը»:*

**Կարէն Կարապետեան**



*Ինչպէս նշում է «The Moscow post»-ը, Սերժ Սարգսեանի աշխատակազմի ղեկավար, ծագումով Տաշիրից, ՀՀԿ գործադիր մարմնի անդամ Կարէն Կարապետեանը 1990-93թթ. եղել է «ՍԻԿ» (Դոնի Ռոստով) առեւտրաարդիւնաբերական ձեռնարկութեան գլխաւոր տնօրէնը, 1993-99թթ.՝ Տաշիրի էմալապատ սպասքի գործարանի տնօրէնը, այնուհետեւ՝ նոյն գործարանի խորհրդի նախագահը: Նրա գլխաւոր բիզնես-գործընկերը հարազատ եղբայրն է՝ Սամուէլ Կարապետեանը, ով ապրում է Ռուսաստանում, որտեղ ունի խոշոր բիզնես եւ հանդիսանում է «Տաշիր գրուպի» սեփականատէրը: Կոնցեռնի կազմի մէջ են մտնում արդիւնաբերական եւ շինարարական կազմակերպութիւններ, առեւտրի կենտրոններ, մատակարարող եւ կենցաղային կազմակերպութիւններ, ռեստորանների եւ հիւրանոցների ցանց, առողջարաններ, ինչպէս նաեւ՝ շուրջ 200 բազմապրոֆիլ կազմակերպութիւններ՝ աւելի քան 30 հազար աշխատակիցներով: Կարապետեանի կոնցեռնը, ըստ «Ֆորբս» ամսագրի, 2007-ին եղել է 12-րդը՝ Ռուսաստանի անշարժ գոյքի ամենախոշոր սեփականատէրերի շարքում: «Տաշիր գրուպը» Ռուսաստանի հայերի միութեան նախագահ Արա Աբրահամեանի եւ նրա «Սոգլասիէ» ՓԲԸ-ի բիզնես-գործընկերն է: «Արա Աբրահամեանի «Սոգլասի-Հայաստան» հայկական բիզնես-կառոյցը հանդիսանում է այն այլանդակութեան լիիրաւ մասնակից, որ Հայաստանում կոչւում է էլիտար շինարարութիւն»՝ իր բոլոր բնորոշ ատրիբուտներով՝ իրենց տներից մարդկանց բռնի տեղահանում, գրոշներով նրանց հողերի եւ տների գնումը եւ այլն: Կարէն Կարապետեանը «Տաշիր գրուպի» ղեկավարն է Հայաստանում, հետեւաբար՝ երկրի տնտեսութեան եւ բիզնեսի տուեալ ոլորտի համար դրանից բխող բոլոր հետեւանքներով: Կոնցեռնի մէջ մտնող ձեռնարկութիւնների մասնագիտացումը նոյնն է, ինչ-որ Ռուսաստանում, սակայն առաջնային ուղղութիւններ են հանդիսանում անշարժ գոյքը, շինարարութիւնը, սպասարկման ոլորտը (առաջին հերթին հիւրանոցներ, սրճարաններ, ռեստորաններ եւ բիստրոներ) եւ առեւտուրը: Վարչապետի պաշտօնի համար Կարապետեանի թեկնածութիւնը քանիցս քննարկուել է Սերժ Սարգսեանի հետ: Չնայած նրա եղբօր՝ Ռուսաստանի հայ համայնքից Հայաստան խոշոր ներդրումների ներգրաւմանը աջակցելու խոստումներին եւ Սերժ Սարգսեանի տուած բազմաթիւ երդումներին, այդ հարցը այդպէս էլ չի լուծուել յօգուտ Կարապետեանի: Վերջինս ստիպուած եղաւ բաւարարուել Նախագահի աշխատակազմի ղեկավարի պաշտօնով»,- գրում է «The Moscow post»-ը:*

# ՆՇՈՒԵՑԱՒ ԱՅՆԹԱՊԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 90-ԱՄԵԱԿԸ



*Այնթապցի մարտիկներ*

*Շարունակուած էջ 7-էն*

*պետութիւնները չեն որ կ'իրագործէին մեծ ոճիրները, այլ անոնց ետին կանգնող կուսակցութիւնները: Գերմանիոյ մէջ հրեաներու ողջակիզման պատասխանատուները նացիներն էին, իսկ Հայոց Ցեղասպանութեան հարցով իթթիհատ կուսակցութեան երեք ղեկավարները՝ Պէհաէտտին Շաքիր, Նազիմ եւ Թալաաթ: Այս երեքն էին, իրենց անմիջական վստահելի անձերով, իրենց գիշերային «անպաշտօն» ժողովներով (եւ առանց ատենագրութեանց) կ'առնէին հիմնական որոշումները, գործադրելու համար անարգ ոճիրները...:*

*Հանդիսութեան իր սրտի խօսքն ուղղեց Հայ Աւետ. համայնքէն՝ Վեր. Պարգեւ Պարտագճեան:*

*Այնթապի Հայրենակցական Միութեան նախագահ Երուանդ Պապայեան հակիրճ ելոյթ մը ունենալով շնորհակալութիւն յայտնեց կազմակերպիչ յանձնախումբին եւ բոլոր անոնց որոնք բաժին ունեցան սոյն ձեռնարկի յաջողութեան եւ միաժամանակ դրուատեց այնթապցիներու միասնութիւնը:*

*Օրուան գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին «Լիլիա» պարային համոյթը, ինչպէս նաեւ երգչուհի Հեղինէ Հարպոյեան եւ ջութակահարուհի Օֆելիա Նանակիւլեան:*

*Սոյն յիշարժան միջոցառումի աւարտին Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք.ի պատգամը կարդաց Արժ. Տ. Սիփան Աւ. Քհնյ. Մխսեան եւ իր «Պահպանիչ» աղօթքով փակուեցաւ սոյն հանդէսը, որուն յաջորդեցին հերոսամարտի քայլերգն ու ընդունելութիւնը:*

# ԻՐԱՆԸ ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹԻՒՆՆ Է, ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՄԵՐ ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՒՄԸ...

*Շարունակուած էջ 14-էն*

*Զահրա- Ինֆորմացիայի պակասը պէտք է վերանայ, այս տեսակ պարբերականների, ամսագրերի քանակը պիտի աւելանայ: Իրանում արուեստագէտների հսկայ բանակ կայ, որը Հայաստանում ցուցադրուելու մեծ ցանկութիւն կ'ունենայ, եթէ տեղեակ լինի այն մշակութային մթնոլորտին եւ պահանջարկին, որ կայ ձեր երկրում: Օրինակ ընկերուհիս նկարչուհի էր, եկել էր Հայաստան շրջագայելու: Հայ նկարիչներից միայն Սարգիս Համալբաշեանի նկարներին էր ծանօթ: Իրեն տարայ Երեւանի ազգային պատկերասրահ, Փարաջանովի թանգարան, Սար-եանի թանգարան, ժամանակակից արուեստի թանգարանը, նա զարմացած էր ու անընդհատ ասում էր, որ Եւրոպա գնալու կարիք չունի, քանի որ Եւրոպան ազգայնացուած ձեւով այս տեղ է: Ընդամէնը պէտք է յարաբերութիւնները ակտիւանան եւ նոր որակ ստանան:*

- Ի՞նչ էք կարծում, կրօնների հանդուրժողականութիւնը կարո՞ղ է դեր խաղալ այդ փոխադարձ շփումներում: Դուք ձեր հանդէպ Հայաստանում կրօնական կամ ազգային խտրականութեան դրսեւորումներ զգացե՞լ էք երբեւիցէ...

*Արաշ- Կրօնը կարող է հսկայական դեր խաղալ մշակոյթի զարգացման մէջ, աւելի նպաստել: Հայաստանում երբեք նման խնդիրների չենք հանդիպել, մենք յարգում ենք միմեանց դաւանանքը, վկան՝ Երեւանի կենտրոնում գտնուող պարսկական «Կապոյտ» մզկիթն է, իսկ Իրանում՝ ձեր կառուցած բազմաթիւ եկեղեցիները: Ընդհանուր գծեր ունենք, որոնք խօսում են հայ-իրանական բարեկամութեան մասին:*

*Զահրա- Երբեք չի եղել, որ իմ մուսուլման լինելը որեւէ խնդիր առաջացնի որեւէ հարցում: Յարգանքը եւ փոխադարձ սէրը մեր երկու ժողովուրդների մէջ կ'աւելանայ, եթէ աւելի լաւ ճանաչենք միմեանց: Իսկ ժողովրդին ճանաչելու լաւագոյն միջոցը նրա մշակոյթին ծանօթ լինելն է, հայերն ու պարսիկներն այդ առումով միմեանց պատմելու եւ ներկայացնելու շատ բան ունեն:*

- Ի՞նչ է Հայաստանը ձեզ համար, հարեւա՞ն երկիր, բարեկա՞մ երկիր թէ՞ մի փոքր աւելին...

*Արաշ- Սա այն տեղն է, ուր ես ստեղծագործական նոր լիցքեր եմ ստանում, ես սիրում եմ այս երկիրը, որը ինձ հարազատ է դարձել եւ դա պատահական չէ, մեր ժողովուրդները միմեանց լաւ են ընկալում:*

*Զահրա- Իրանը մեր անփոխարինելի հայրենիքն է, որի հետ կապուած ենք հազարաւոր թելերով... Հայաստանը արուեստի երկիր է, ազգային խորը արմատներով, որը մեզ ոգեշնչում է մեր ազգային մշակոյթի մէջ նոր քայլեր անել: Իրանը մեր ինքնութիւնն է, Հայաստանը՝ մեր ինքնաճանաչումը...*

- Շնորհակալութիւն անկեղծ զրոյցի համար:

***Ցոլա***

# ՄԱՐԶԱԿԱՆ

## ԾԱՆՐԱՄԱՐՏ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՒԱՔԱԿԱՆԸ ԹԻՄԱՅԻՆ ՀԱՇՈՒԱՐԿՈՎ ՉՈՐՐՈՐԴՆ Է

*Հայաստանի հաւաքականը Պելառուսի մայրաքաղաք Մինսկում կայացած Եւրոպայի ծանրամարտի առաջնութիւնում թիմային հաշուարկով զբաղեցրել է չորրորդ հորիզոնականը՝ երկամարտում նուաճելով 2 ոսկէ, 4 արծաթէ եւ 1 պրոնզէ մետալ:*

*Ընդհանուր առմամբ, հայ մարզիկները նուաճել են 19 մետալ: Յաղթողի կոչումը նուաճել է Ռուսաստանի ընտրանին 4 ոսկէ, 4 արծաթէ եւ 1 պրոնզէ մետալով: Երկրորդը Թուրքիայի ընտրանին է (4-0-2), իսկ լաւագոյն եռեակը եզրափակում է Պելառուսի թիմը (3-0-5): Հինգերորդը Լեհաստանի հաւաքականն է՝ 1-2-1 արդիւնքով:*

## ԳԷՈՐԳ ՊՕՂՈՍԵԱՆԸ ԵՒՐՈՊԱՅԻ ԱԽՈՅԵԱՆ, ԱՐԱ ԽԱՉԱՏՐԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՓՈԽ ԱԽՈՅԵԱՆ



*Արա Խաչատրեանին եւ Գէորգ Պօղոսեան*

*Ապրիլի 9-ի ուշ երեկոյեան Պելառուսի մայրաքաղաք Մինսկում ընթացող Եւրոպայի ծանրամարտի առաջնութիւնում մրցահարթակ դուրս եկան մինչեւ 85 կգ քաշային կարգը ներկայացնող մարզիկները: Այս քաշային կարգում Հայաստանի հաւաքականը հայտաւորել էր երկու ծանրորդների՝ Արա Խաչատրեանին եւ Գէորգ Պօղոսեանին: Վերջնարդիւնքում պարզ դարձաւ, որ հենց մեր դիւցազուններն են տուն տալու մրցակցութեանը եւ վիճարկելու են խաղարկուող ամենաբարձր պարգեւները:*

*Պոկում վարժութիւնում, ի դէպ, մեր մարզիկներն այնքան էլ յաջող հանդէս չեկան: Երկուսն էլ արձանագրեցին 165 կգ արդիւնք: Արա Խաչատրեանը, ով անձնական քաշի ցուցանիշով գերազանցում էր Գէորգ Պօղոսեանին, տիրացաւ փոքր պրոնզէ մետալին: Այս վարժութիւնում յաղթողի կոչումը նուաճեց Պելառուսի ներկայացուցիչ Միկալայ Նովիկովը՝ բարձրացնելով 171 կգ քաշ: Երկրորդը թուրք մարզիկ Իզեթ Ինսեն էր՝ 170 կգ արդիւնքով:*

*Հրում վարժութիւնում Գէորգ Պօղոսեանն ու Արա Խաչատրեանը ողջ Եւրոպային յայտարարեցին, որ այս քաշային կարգում պարզապէս հաւասարը չունեն: Գէորգն իր կամքին ենթարկեց 204 կգ ծանրաձողը, իսկ Արան բարձրացրեց 203 կգ: Այս արդիւնքների շնորհիւ Գէորգ Պօղոսեանը հռչակուեց Եւրոպայի ախոյեան, իսկ Արան արժանացաւ փոխախոյեան կոչմանը:*

## ՄԵԼԻՆԷ ԴԱԼՈՒՁԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՓՈԽ ԱԽՈՅԵԱՆ



*Եւրոպայի նախկին ախոյեանուհի Մելինէ Դալուզեանը յաջողութեամբ նշեց նորամուտը նոր՝ մինչեւ 69 կգ քաշային կարգում՝ երկամարտի 260 կգ արդիւնքով ճանաչուելով 2-րդը: Ոսկէ մետալների համար պայքարում Մելինէի գլխաւոր մրցակցուհին Եւրոպայի ներկայիս ախոյեանուհի, ռուսաստանցի Օքսանա Սլիվենկոն էր, որն երկամարտի 262 կգ արդիւնքով հռչակուեց Եւրոպայի ախոյեանուհի: 244 կգ արդիւնքով պրոնզէ մետալակիր դարձաւ պելառուսցի Շեմշաթ Տուլիաեւան:*

***

*Հայ ծանրորդ Ռուբէն Ալեքսանեանը նուաճեց փոխախոյեանի կոչումը: Հայ 20-ամեայ դիւցազունը մայրցամաքային մրցաշարում պարզապէս գերազանց գործեց:*

*Հրում վարժութիւնում Ռուբէն Ալեքսանեանը բարձրացրեց 195 կգ: Սակայն նրա հիմնական մրցակիցը՝ Ռուսաստանի ներկայացուցիչ Եւգենի Ջիգիշիովը, 10 կգ-ով առաջ անցաւ՝ իր կամքին ենթարկելով 205 կիլոգրամանոց ծանրաձողը: Օլիմպիական գործող ախոյեանը՝ գերմանացի Մաթիաս Շտայները, այս վարժութիւնում երրորդն էր՝ 190 կգ արդիւնքով:*

## ՀԱՅԱՍՏԱՄՈ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԽՄԲԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ
## 3-ՐԴ ՏՈՒՐ

*Հայաստանի ֆութպոլի բարձրագոյն խմբի առաջնութեան 3-րդ տուրում կենտրոնականը, անշուշտ, «Ուլիս»-«Բանանց» հանդիպումն էր: Նախորդ տուրերի խաղերը ցոյց էին տուել, որ ներկայ դրութեամբ լաւագոյն մարզավիճակում են «Փիւնիկն» ու «Միկան»: Որոշ չափով իր յաւակնութիւնները դրսեւորել էր նաեւ «Ուլիսը», սակայն դեռ չի հանդիպել վերը նշուած թիմերի հետ: Իսկ «Ուլիս»-«Բանանց» հանդիպումը, կարելի է ասել, որոշակի պատկերացում պէտք է տար, թէ մրցանակային եռեակում տեղ գրաւելու տեսանկիւնից որ թիմերի հնարաւորութիւններն են առաւել գերադասելի: Յաղթանակի դէպքում, իհարկէ, «Ուլիսն» զգալիօրէն առաջ կանցնէր «Բանանց»ից, իսկ վերջինս, բնականաբար, պէտք է կանխէր իրադարձութիւնների նման սցենարը:*

*Ի վերջոյ, գրանցուեց մարտական ոչ-ոքի: Հետաքրքիր է, որ հիւրերը՝ «Բանանց»ի ֆութպոլիստները, երկու անգամ հաշուի մէջ առջեւում էին, սակայն չկարողացան պահպանել յաղթական արդիւնքը: Էդուարդօ դօ Սանթոսի խփած կոլին դաշտի տէրերը պատասխանեցին Ալեքսանդր Պետրոսեանի դիպուկ հարուածով: 79-րդ րոպէին կրկին Էդուարդօ դօ Սանթոսն առաջ մղեց իր թիմին, սակայն Արա Յակոբեանին մրցավարի կողմից փոխհատուցուած ժամանակում յաջողուեց վերականգնել հաշուի հաւասարակշռութիւնը:*

*Հաշուետու տուրում միաւորներ կորցրեց նաեւ «Փիւնիկ»ը՝ արտագնայ խաղում կոլազուրկ ոչ-ոքի արձանագրելով «Իմպուլսի» հետ:*

| | |
|---|---|
| *«Ուլիս»-«Բանանց»* | *2:2* |
| *«Իմպուլս»-«Փիւնիկ»* | *0:0* |
| *«Միկա»-«Կիլիկիա»* | *2:0* |
| *«Շիրակ»-«Գանձասար»* | *0:1* |

*Մրցաշարային աղիւսակը 3-րդ տուրից յետոյ*

| | Թիմ | Խ | Հ | Ո | Պ | Գնդ. | Մ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | «Փյունիկ» | 3 | 2 | 1 | 0 | 7-2 | 7 |
| 2. | «Ուլիս» | 3 | 2 | 1 | 0 | 6-2 | 7 |
| 3. | «Կիլիկիա» | 3 | 2 | 0 | 1 | 6-4 | 6 |
| 4. | «Միկա» | 3 | 2 | 0 | 1 | 8-4 | 6 |
| 5. | «Բանանց» | 3 | 1 | 1 | 1 | 7-8 | 4 |
| 6. | «Գանձասար» | 3 | 1 | 0 | 2 | 2-4 | 3 |
| 7. | «Իմպուլս» | 3 | 0 | 1 | 2 | 2-8 | 1 |
| 8. | «Շիրակ» | 3 | 0 | 0 | 3 | 1-7 | 0 |

### ԽՕՍԵՑԵԱԼՔ

*ԱՐԱ ՊՈՅԱՄԵԱՆ ԸՆԴ ՎԵՐԺԻՆԻԱ ՄԵԼԳՈՆԵԱՆ*
*3 Ապրիլ, 2010 Նորթ Հոլիվուտ*

*Մեր ջերմ շնորհաւորութիւնները նշանուող զոյգին եւ անոնց ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. ընկեր Յարութ եւ Լուսին Պոյամեաններուն:*


**Bid Request**

**General Contractors**

Qualified "A", licensed Contractors are invited to submit sealed bids by 2:05 PM, May 12, 2010 to the Burbank-Glendale-Pasadena Airport Authority for Project Number E09-21, RSA Paving Rehabilitation Reconstruction project. The Work in general consists of, but is not limited to, removal and replacement of existing 4 inch ± 1 inch P-401 asphalt concrete pavement on the runway safety areas of RWY 8-26 and RWY 15-33, base compaction, and application of P-620 pavement markings at the Bob Hope Airport. Plans and specifications can be obtained directly from the Bob Hope Airport Web site at bobhopeairport.com under Business Opportunities. All bidders shall register with the Airport Engineering Department either via web site or in person. Bids submitted by firms who have not registered with Airport Engineering will be considered non-responsive. Call Bobbi Greenspahn at (818) 565-1305 for more information. A pre-bid conference will be conducted on April 28, 2010, at 10:00 A.M. at the Bob Hope Airport Engineering Office, 2800 Clybourn, Burbank, California, 91505. Located at the corner of Sherman Way and Clybourn.

**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**

**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ**

**(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA

ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

# ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԿՆՈՋ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹԵԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*Շարունակուած էջ 13-էն*

*է եւ «բնական»: Հասարակութիւնը կտրուկ կարող է դատապարտել բռնարարք կատարողին, սակայն ապրումակցում (էմպատիա) զոհի նկատմամբ հասարակութիւնը եւս չունի, այդպէս կարծես արտայայտելով իր վերաբերմունքը կատարուածին, նշելով նրա մեղքի բաժինը:*

*Շատ կանայք բռնութիւնը հանդուրժում են տեւապէս, երբեմն իրենց թւում է, թէ իրենք «արժանի» են դրան: Կինը մեղքի զգացում ապրելով՝ կարծես էապէս իր «ներդրումն» է կատարում զոհի եւ բռնարարք կատարողի յարաբերութիւնների աւանդական մօտեցումների պաշտպանութեան գործում, զոհն իր «մեղաւորութեամբ» կարծես ընդունում է տարածուած այնպիսի մօտեցում, որ կինը միայն սեռական օբիեկտ է: Դրա համար շատ կարեւոր է քանդել այդ փակ շրջանը, իսկ նախեւառաջ պէտք է կինը ազատուի մեղքի զգացումից եւ դադարի իրեն մեղադրելուց, այն ժամանակ, երբ հասարակութիւնն այսպէս, թէ այնպէս զբաղուած է իր «մեղաւորութեան» աստիճանը որոշելով:*

*Կնոջ «վիկտիմութիւնը» դրսեւորւում է միամտաբար այն ժամանակ, երբ ցանկացած կին տղամարդու մէջ գնահատում է տղամարդկութիւնը, ասել է թէ՝ ֆիզիվական ուժը, կտրուկութիւնը, «չափաւոր կոպտութիւնը», խօսքի տէր լինելը եւ այլն: Յաճախ ընդհանրապէս կանանց՝ կարեւոր չէ որ երկրի կամ որ մայրցամաքի, դուր են գալիս զինուորականները՝ նրանց համազգեստը, նիստուկացը, կեցուածքը: Եւ ինչ վերաբերում է տղամարդու ֆիզիքական ուժի առումով կնոջ նախասիրութեանը, ապա դրա պատճառն այն է, որ նա միշտ տղամարդու մէջ փնտռում է պաշտպանութիւն եւ յուսալիութիւն: «Ուժին խոնարհուելը իր հիմքում ունի մի օրէնք, ըստ որի կինը սերունդ է վերարտադրում այն հաւանականութեամբ, որքան ամուր է տղամարդը, որին նա պատկանում է: Ահա թէ ինչու կանայք մշտապէս փնտռում եւ ընտրում են որպէս ամուսին ուժեղ, անգամ կոպիտ տղամարդկանց՝ գերադասելով նրանց թոյլերից, որոնք, սակայն իրենց աւելի լաւ են վերաբերւում» (Սպենսեր, 1886թ.): Ինտոնեզիայում JWT գործակալութիւնն ընդդէմ ընտանեկան բռնութեան սոցիալական գովազդի մէջ ներկայացրել է մկանոտ եւ «չար» տղամարդկանց: Կազմակերպութեան նշանաբանն է՝ «եթէ ձեր կինը, ընկերուհին, աղջիկը այս տեսքն ունենար, դուք դեռ կը մտածէի՞ք նրանք հարուածելու մասին»: Հետեւեալ գաղափարը ցոյց է տալիս ընտանեկան բռնութեան դրսեւորման պատճառներից մէկը՝ ֆիզիքական ուժի ցուցադրումը եւ տղամարդկանց ինքնաիրացումը նրանց հաշւին, ովքեր իրենցից թոյլ են:*

*Բռնութեան ենթարկուած կանայք առանձնանում են անկումային տրամադրութեամբ (դեպրեսիւութեամբ), ընկճուածութեամբ, անսարդինաւէտութեամբ, ինքնաիրացման խնդիրներ ունեն, սոցիալական հարմարուողականութեան ընդունակութիւնները խախտուած են: Արտաքին դրսեւորումներում ակնյայտ է դիմախաղի իւրայատկութիւնը, բացասական յոյզեր է արտայայտում իր երեխաների նկատմամբ: Աւտորիտար ընտանիքներում կինն իրաւունք չունի ինքնուրոյն որոշումներ ընդունելու: Շատ կանայք այդպիսի պայմանների հետեւանքով կորցրել են իրենց անհատականութիւնը, տաղանդը, ընդունակութիւնները: Կնոջ հոգեբանական առանձնայատկութիւնները կապուած բռնութեան հետ մեծ փոփոխութեան են ենթարկւում, աւելի յաճախ առաջանում է զոհի բարդոյթ, մեղքի զգացումը արմատանում է, երբեմն «արդարացնում է» ամուսնու «սպասելիքները» (վիկտիմ վարքագիծ), որն էլ անցնում է «հերթական բռնութեան»:*

*2007-2008թթ. Amnesty International (AI) կազմակերպութեան կատարած հետազօտութիւնները Հայաստանում ցոյց են տուել, որ 25% հայ կանայք թէկուզ մէկ անգամ ենթարկուել են ընտանիքում ֆիզիքական բռնութեան ամուսնու կամ այլ հարազատների կողմից: «Հայաստանի կանայք համարւում են խտրականութեան զոհեր եւ յաճախ տառապում են ընտանիքում ֆիզիքական եւ հոգեբանական բռնութեան հետեւանքով: Սակայն շատ յաճախ այս փաստը գաղտնի է պահւում իրենց իսկ կողմից՝ ընտանիքի պահպանման նպատակով: Այս տեսակէտից նաեւ հայկական իրականութեան մէջ համարւում է, որ տղամարդն իրաւունք ունի անցնել բռնութեան՝ իր կնոջ կամ ընտանիքում այլ կանանց նկատմամբ, դրա համար փաստացի այն յանցագործութիւն չի համարւում»:*

*«Կնոջ ժառանգութեան պահպանման եւ մայրութեան պահանջմունքը գերիշխում է նրա անհատական ցանկութիւններին»: Իրականում մարդիկ աւելի մեծ ցանկութիւն ունեն յարմարուելու, քան ստիպուած են այդ անել: Կնոջ դէպքում գումարւում է ընտանիքը պահպանելու, չքայքայելու դրդապատճառը: «Մերձեցումը խմբի հետ ժամանակակից արեւմտեան հասարակութեան համար անձնական մենութիւնից խուսափելու գերակշիռ միջոց է: Այդ մերձեցումը, որի մէջ մարդը որպէս անհատականութիւն զգալի չափով կորցնում է իրեն, ունի նպատակ՝ չառանձնանալ, միաձուլուել բոլորի հետ, բոլորի կողմից ընդունուած նորմերին եւ սովորոյթներին համապատասխան: Եթէ ես նման եմ էլի մէկ ուրիշին, եթէ չունեմ ինձ ուրիշից զանազանող զգացմունք կամ մտքեր, եթէ իմ նախասիրութիւններով, հագուստով, գաղափարներով հարմարւում եմ խմբի օրինակներին, ուրեմն՝ ես փրկուած եմ, փրկուած՝ միայնակութեան սարսափելի զգացումից: Այսպիսի հարմարուողականութիւնը խթանելու համար դիկտատորական համակարգերը կիրառում են սպառնալիքը, բռնութիւնը, ժողովրդավարականը՝ ներշնչումը եւ քարոզչութիւնը»:*

*Միայնակութեան զգացումից խուսափելու համար շատ յաճախ կանայք կորցնում են իրենց «եսը» եւ մտածելակերպի սթափութիւնը, դառնում աւելի կախեալ եւ ճնշուած՝ յատկապէս երբ աւտորիտար դրսեւորումներն ընտանիքում իրենց նկատմամբ շարունակական են դառնում: Այդպիսի մթնոլորտում «յարմարուելով», որտեղ գործում է «քամելիոն» մեխանիզմը, իրենք կարծես իրօք «փրկուած» են առանձին դիտուելուց կամ «սպիտակ ագռաւ» լինելուց: Բռնարարք գործող անձի հետ հիւանդագին, տրաւմատիկ ձուլումից դուրս գալու վախը, որը միաժամանակ հասարակութեան կողմից, հարազատներից մերժուելու վախն է, նրան ընդհակառակը մղում է դէպի իր ագրեսորը, սակայն այդպիսի միասնութիւնը, յարմարուողականութիւնը (կոնֆորմիզմը) թուացեալ է եւ չի ձերբազատում նրան միայնակութեան տագնապից: Այստեղ արդէն անձի այլ հոգեբանական մեխանիզմ է գործում, այն է սադոմազոխիստական դրսեւորումները, որոնք եւս սիմբիոտիկ միասնութեան հետ են կապուած: Ինչպէս սադիստը հոգեբանական մեծ կախուածութեան մէջ է իր զոհից, իրեն ենթարկեցող անձից, այնպէս էլ մազոխիստը մեծ կապուածութիւն ունի իր «ագրեսորին»՝ ենթարկուածութիւն եւ «ձուլում, սակայն չամբողջացնելով»:*

*Հաւասարութիւնն անհատի զարգացման պայման է: Հաւասարութիւնն այսօր սեռերի միջեւ աւելի մեծ չափով նշանակում է նոյնացում, քան միասնութիւն: «Այդ իմաստով ստիպուած ենք թերագնահատօրէն գերագնահատել առաջընթացի մի քանի «նուաճումներ», օրինակ՝ կանանց էմանսիպացիան: Անհրաժեշտութիւն չկա ասելու, որ ես իրաւահաւասարութեան կողմնակից եմ, բայց դէմ եմ այսպէս կոչուած՝ հաւասարութեան, որբ կինն այլեւս չի տարբերւում տղամարդուց: Սեռի բեւեռային հակադրութիւնը վերանում է, դրա հետ միասին վերանում է նաեւ բեւեռացման վրայ էրոտիկ սէրը: Կինն ու տղամարդը նմանուեցին, հաւասարուեցին, բայց ինչպէս հակադարձ բեւեռները, հաւասար արժէքներ չդարձան: Հակադրութիւնն է ստիպում գտնել միասնութիւն:*

*Տարածուած թիւր կարծիքը ոչ միայն յատուկ է աւելի ցածր քաղաքակրթութիւն ունեցող կամ հին եւ խոր աւանդոյթներով շարժուող հասարակութիւններին, այլ նաեւ տարբեր գիտնականների, գրողների, ովքեր իրենց ստեղծագործութիւններում կնոջը նկարագրել են որպէս մարդ արարածի առաւել ցածր տեսակ, սիրո մէջ կնոջ ինքնանուիրումը՝ որպէս հիւանդագին վիճակ: Օրինակ՝ 19-րդ դարի իտալացի յայտնի հոգեբոյժ եւ քրէագէտ Զ. Լոմբրոզոն գրում է. «Կնոջ սիրոյ բնոյթը ցոյց է տալիս, որ նա տղամարդուց ցածր է, քանի որ նմանատիպ զգացմունքներ կարող էին զարգանալ միայն նրա անձնական «եսի» ոչնչութեան փոփոխականութեան շնորհիւ: Մեծ ցանկութիւնները եւ կրքերն անհամատեղելի կը լինէին նրա կողմից իր սեփական անձը այլ անձի հետ ձուլելու այսպիսի հակման՝ կամքի գրեթէ ամբողջական կորստով, որը սովորաբար լինում է միայն մի շարք հիւանդագին իրավիճակներում, ինչպէս օրինակ՝ հիպնոսի ժամանակ:*

*Բոլոր ժամանակներում ի սկզբանէ դաստիարակութեամբ խարսխւում են տղամարդու «գերիշխանութեան» եւ «առաւելութեան» գաղափարները: Բոլոր դէպքերում կանանց՝ որպէս սեռի, հալածման պատճառը տղմարդիկ չեն, այլ հասարակութեան մէջ ինստիտուցիոնալ յարաբերութիւններն են, որտեղ տղամարդկանց տրուած է կանանց նկատմամբ գերիշխող դիրք:*

*Այսպէս՝ Հայաստանում գենդերային բռնութեան մասին իրազեկութիւնը շատ ցածր է, ընդհանրապէս հրապարակայնօրէն չի շօշափւում եւ քննարկւում: Դրան խոչընդոտում են եւ բռնութիւն կատարողը եւ զոհը, քանի որ.*

*1. ընտանեկան բռնութիւնը դիտարկւում է որպէս «մասնաւոր ընտանեկան գործ»,*

*2. հասարակութեան մէջ «ընտանեկան բռնութեան» բարձրաձայնումը, ապահարզանը, բաժանումը աւելի ամօթալի փաստեր են, քան ինքը՝ բռնութիւնը,*

*3. ընտանեկան բռնութեան զոհը հասարակական տեսանկիւնից դիտւում է մեղաւոր,*

*4. հին աւանդոյթների հիման վրայ հայկական մշակոյթում մնացած կեղծ կարծրատիպերը «պարտադրում» են տղամարդուն պահպանել ընտանիքում կոպիտ եւ ագրեսիվ պահուածք,*

*5. մինչ օրս ԶԼՄ-ները տարբեր «անփոյթ» ֆիլմերի, հաղորդումների միջոցով «քարոզում» են սեռերի անհաւասարութեան մէջ թոյլ կողմը եւ չեշտում ընդունուած «մեղքի» եւ «ամօթի» զգացումը կրող կերպար:*

*Պատկան կառոյցները մեծ անելիքներ ունեն կատարելու Հայաստանում, առաջին հերթին՝ ակտիւ տեղեկատուական դաշտում լրատուութիւն «ներդնելով», մինչեւիսկ մասնաւոր դէպքերին անդրադառնալն ու օժանդակելը:*

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

*ԳՐԻԳՈՐ ԳՈՒՋՈՒԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով Ալիս Ցարութիւնեան $100 տոլար կը նուիրէ Նոր Սերունդ Մշակութային Միութեան, որուն համար միութիւնս շնորհակալութիւն կը յայտնէ:*

# ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԱՒԱՆԴՄԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ

*Շարունակուած էջ 8-էն*

*վարժութիւններն ու աշխատանքները, որոնց ընդմէջէն աշակերտները պիտի տիրապետեն ծրագրին մէջ նշուած բոլոր ունակութիւններուն: Դոկտ. Անդրէասեան շնորհակալութիւն յայտնեց ՀԲԸՄ վարժարաններու տնօրէնին՝ Յակոբ Յակոբեանին, եւ փոխտնօրէնուհիին՝ դոկտ. Թալին Քարկոտորեանին, որոնք առիթը ընծայած են «Պապայեան» մանկավարժական հիմնարկի պատասխանատուներուն՝ իրենց ուսուցիչներուն հետ համագործակցելու եւ սոյն ծրագիրները պատրաստելու համար:*

*Փակման խօսքը փոխանցեց դոկտ. Սիլվա Գարայեանը՝ շնորհակալութիւն յայտնելով մասնակցող բոլոր վարժարաններու տնօրէններուն եւ զիրենք ներկայացնող ուսուցիչ-ուսուցչուհիներուն: Ան վստահեցուց ներկաները, թէ սոյն աշխատանիստը պիտի ըլլայ առաջինը նմանօրինակ շարք մը աշխատանիստներու, զորս «Պապայեան» մանկավարժական հիմնարկը նկատի առած է կազմակերպել: Վարձքը կատար բոլոր անոնց, որոնք հայեցի դաստիարակութեամբ, հայապահպանմամբ եւ հայերէն լեզուի դասաւանդութեամբ հետաքրքրուած են, եւ իրենց ներդրումը բերին սոյն ձեռնարկի յաջողութեան:*


Armenian
Genocide
Commemoration
April 24
2010
Հայկական
Ցեղասպանութեան
Ոգեկոչում
Armenian Genocide United Commemorative Committee
• ARMENIAN MONUMENT MONTEBELLO - 1:30 PM
Armenian Genocide Commemorative Committee
Հայկական Ցեղասպանութեան Ոգեկոչման
Համագաղութային Մարմին
• PROTEST RALLY AT LITTLE ARMENIA - 10:00 AM
Unified Young Armenians
Միացեալ Հայ Երիտասարդներ
• PROTEST RALLY AT TURKISH CONSULATE - 4:00 PM
Armenian Youth Federation
Հայ Երիտասարդաց Դաշնակցութիւն